



ԶՄԻԱԾԻՆ

1973

9



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Վեճափառ Հայրապետի այցելությունը Հայկական ՍՍՀ Միճիստրների սովետի նախագահ Վեճափառ Գրիգոր Ա. Արզումանյանին	3
Քաղվածքներ Գերագույն Ռոգևոր խորհրդի նիստերի արձանագրություններից	4
ԻՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ	6
Հայտարարություն	9
Ամառվերջի Ռադիսություն Ռոգևոր նմարանում	10
Լուրեր թեմերից	15
Ա. ՀԱՏԻՏՅԱՆ—Ծնորդային որպես մատենագիր	17
ՍՈՒՐԵՆ, Ի. ԲՈՎԱՆԶՅԱՆ—Արտակ նպիսկոպոս Ամբաստանցը և նրա՝ Մայր Աթոռի տպարանի պատմության մասին գրած երկը	26
Ռ. ԱԹԱՅԱՆ—Կոմիտասի առաջին տպագրված ստեղծագործությունը	34
Լուրեր Հայաստանյայց եկեղեցու թեմերից	41
Լուրեր քույր եկեղեցիներից	44
Մատենագիտություն «Էջմիածին» ամսագրի	48

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ, ԷՋՄԻԱՄԻՆ

«ԷՋՄԻԱՄԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала «Эчмиадзин».
Rédaction de la revue «Etchmiadzine», Etchmiadzine, Arménie, URSS

Հանձնված է արտադրության 8/VI 1978 թ.: Ստորագրված է տպագրության 4/VII 1978 թ.:

Տպագրական 4 մամուլ, թուղթ 80×84¹/₈, պատվեր 498

Մայր Աթոռ ս. Էջմիածնի տպարան, 1978 թ.

ՀՐԱՄԱՆԱԻ

Տ. Տ. ՎԱՋԳԵՆԻ ԱՌԱՋՆՈՑ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԱՋՆԱԳՈՅՆ ՆԱԹՈՂԻԱՌՄԻ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



**ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԿԱԿԱՆ
ՍՍՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀ ՄԵԾԱՀԱՐԳ
ԳՐԻԳՈՐ Ա. ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆԻՆ**

Հունիսի 1-ին, ուրբաթ օրը, առաւիտեայան ժամը 12-ին, Վեհափառ Հայրապետը երևանում, Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետում, պաշտոնական այցելություն է տուլիս Մինիստրների սովետի նախագահ մեծաճարգ Գրիգոր Ա. Արզումանյանին:

Վեհափառ Հայրապետին ողջկցում էր Մայր Աթոռի դիվանապետ տ. Արսեն ծ. վրդ. Բերբերյանը:

Հայոց Հայրապետը Իր այցելության առիթով ջերմորեն ողջունում է և շնորհավորում Հայաստանի վարչապետ պրն. Գ. Արզումանյանին և նրան ու հայրենի բարեխնամ կառավարությանը բարեմաղթում նորանոր հաջողություններ՝ հայրենաշեն նրանց գործունեության ճանապարհի վրա:

Այնուհետև Հայոց Հայրապետի և ՍՍՀ Մինիստրների սովետի նախագահի միջև տեղի է ունենում ուրտագին գրույց, որին ներկա են լինում Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետի գործերի կառավարիչ Հ. Հ. Մելքոնյանը և Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Ս. Տ. Գասպարյանը:





Ք Ա Ղ Վ Ա Ծ Գ Ն Ե Ր
ԳԵՐԱԳՈՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՈՐԴԻ ՆԻՍՏԵՐԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ

1978 թ. ՀՈՒՆԻՍԻ 1-Ի ՆԻՍՏԻՑ

Հունիսի 1-ին, չորեքշաբթի օր.

Վեճափառ Հայրապետի բարձր նախագահության ներքո, երեկոյան ժամը 19-ին, Վեճարանում գումարվում է Գերագույն հոգեվոր խորհրդի հերթական նիստը:

Գերագույն հոգևոր խորհրդի սույն նիստում լսվում է Մայր Աթոռի ֆինանսական բաժնի վարիչ Գառնիկ Քեհյայանի զեկույցը, Մայր Աթոռի 1972 թվականի բյուջեի կատարողականի և 1978 թվականի նախահաշվի մասին:

Գերագույն հոգևոր խորհուրդը մտքերի փոխանակությունից հետո անհրաժեշտ գը-

տավ առավել խնայողությամբ վարել Մայր Աթոռի ֆինանսական գործունեությունը, հատկապես շինարարական աշխատանքներում:

Գերագույն հոգևոր խորհուրդը վավերացրեց 1972 թվականի Մայր Աթոռի բյուջեի կատարողականը և հաստատեց 1978 թվականի բյուջեի նախահաշիվը:

Այս առթիվ Գերագույն հոգևոր խորհուրդն իր գնահատանքն է արձանագրում Մայր Աթոռի ֆինանսական բաժնի վարիչ Գառնիկ Քեհյայանի կատարած քարեխիղճ և ազնիվ աշխատանքի համար:

1978 թ. ՀՈՒՆԻՍԻ 6-Ի ՆԻՍՏԻՑ

Վեճափառ Հայրապետի բարձր նախագահության ներքո, երեկոյան ժամը 19-ին, Վեճարանում գումարվում է Գերագույն հոգեվոր խորհրդի հերթական նիստը:

Ա. Գերագույն հոգևոր խորհուրդը սույն նիստում քննության առավ Երևանի ս. Զորավար Էլենդեցու նախկին քահանա Հովհաննես Կարապետյանի 8 հունիս 1978

թվակիր՝ Վեճափառ Հայրապետին ուղղված աղերսագիրը, ուր անկեղծ և խոր զոջում էր հայտնում, որ 1970 թվականին, դրժելով իր ծառայության ուխտը, լքել էր Երևանի իր հոտը և մեկնել արտասահման, որի համար էլ Վեճափառ Հայրապետի վճռով կարգալույծ էր հռչակվել: Ժողովում հաղորդում լսվեց այն մասին, որ Հովհաննես Կարա-

պետյանը արտասահման մեկնելու առաջին իսկ օրից, զգալով իր կատարած ծանր պխալը, դիմել էր Հայոց Հայրապետին՝ խնդրելով ներում և վերահաստատում իր քահանայական կարգի մեջ, պատրաստակամություն հայտնելով անմիջապես վերադառնալու հայրենիք և դարձյալ ծառայելու Երևանի ս. Ջորավար եկեղեցում:

Գերագույն հոգևոր խորհուրդը, ի նկատի ունենալով նախկին քահանա Հովհաննես Կարապետյանի անկեղծ զոջումը և հավատարմությունը դեպի Մայր Աթոռ ս. Էջմիածինը, և վերջին երեք տարիների նրա պաշտոնագրվումը ու բարոյական տառապանքը համարելով ապաշխարության շրջան, նաև նկատի ունենալով, որ նա իր հավատարմության ուխտը այսօր վերանորոգել է Փրկչի իջնան ս. սեղանի առաջ և իր պատրաստակամությունը է հայտնում ծառայելու Հայաստանյայց եկեղեցուն՝ Հայաստանում կամ արտասահմանում, ուր որ Վեհափառ Հայրությանը նրան կնշանակի, որոշեց խնդրել Նորին Ա. Օծույթյանը՝ ներում շնորհել և վերականգնել Հովհաննես Կարապետյանին իր քահանայական կոչման ու պաշտոնի մեջ:

Վեհափառ Հայրապետը, ընդառաջելով Գերագույն հոգևոր խորհրդի միջնորդությանը, ներում է շնորհում Հովհաննես քահանա Կարապետյանին և նրան վերականգնում իր քահանայական կոչման ու պաշտոնի մեջ՝ նշանակելով նրան հոգևոր հովիվ լիոն քաղաքում, համաձայն տ. Սերովբե արքեպիսկոպոսի առաջարկության:

Բ. Գերագույն հոգևոր խորհրդի սույն նիստում լսվում է նաև տ. Վահան եպս. Տերյանի զեկույցը իր՝ Կալկաթա այցելության մասին:

Տ. Վահան եպիսկոպոսը հանգամանորեն ներկայացնում է իր զեկույցագրի մեջ Հրեդ-

կատանի և ի մասնավորի Կալկաթայի հայ համայնքի եկեղեցական - մշակութային կյանքը և որոշ տեղեկություններ է հաղորդում Մասեհ Բաբաջանյանի կտակի հետ կապված խնդիրների մասին:

Գերագույն հոգևոր խորհուրդը տ. Վահան եպիսկոպոսի զեկույցն ընդունում է ի գիտություն:

Գ. Գերագույն հոգևոր խորհրդի սույն նիստում լսվում է Մայր Աթոռի շինարարական աշխատանքների ղեկավար և գլխավոր ճարտարապետ Արծրուն Գալիկյանի զեկույցը Մայր Աթոռի 1978 թվականի շինարարական աշխատանքների ընթացքի մասին:

Մայր Աթոռի ճարտարապետը հանգամանորեն խոսում է Երևանի ս. Սարգիս եկեղեցու, Բյուրակյանի «Հայկաշեն» հայտնաբերական ամառանոցի և Մայր Աթոռում «Լազարապատ»-ի վրա կատարված, կատարվող և ընթացիկ շինարարական աշխատանքների մասին:

Ճարտարապետ Ա. Գալիկյանը իր զեկույցագրում խոսում է նաև ս. Գեղարդ վանքում կատարվող շինարարական մանր աշխատանքների մասին:

Վեհափառ Հայրապետը և Գերագույն հոգևոր խորհուրդը արձանագրում են Մայր Աթոռի ճարտարապետ և շինարարական աշխատանքների ղեկավար Ա. Գալիկյանի կատարած բարեխիղճ աշխատանքը և որոշում են ընդունում հրահանգել նրան, որպեսզի որքան հնարավոր է շուտ ավարտվի 1978 թվականի համար նախատեսված շինարարական ծրագիրը Մայր Աթոռում և նրա շրջանակից դուրս:

Վեհափառ Հայրապետը և Գերագույն հոգևոր խորհուրդը շնչտում են հատկապես կարելի փութով ախարտումը ս. Սարգիս եկեղեցու վերակառուցման:





Մ Ա Յ Ր Ա Թ Ո Ռ Ո Ւ Մ

**Մայիսի 31-ին, հինգշաբթի.—Համար-
ծումն Քրիստոսի.**

Մայր տաճարում ս. պատարագ է մատու-
ցում տ. Հովհաննես քահ. Մարությանը և
«Հայր մեր»-ից առաջ քարոզում՝ «Եհան
վնոսա մինչև ի Բեթանիա, և ամբարձնալ
զձեռս իւր օրհնեաց զնոսա: Եւ եղև յօրհնելն
նորա զնոսա՝ մեկնեցաւ ի նոցանէ, և վե-
րանայր յերկինս» (Ղուկ. ԻԴ 50—51) բնա-
րանով:

Ս. պատարագին ներկա է լինում Վեհա-
փառ Հայրապետը:

• •

**Հունիսի 8-ին, կիրակի.—Երկրորդ Ծաղ-
կազարդ.**

Մայր տաճարում ս. պատարագ է մատու-
ցում տ. Մուշեղ վրդ. Պետիկյանը:

Ս. պատարագին ներկա է լինում Վեհա-
փառ Հայրապետը:

• •

**Հունիսի 10-ին, կիրակի.—Հոգեգալուստ
(Պննտեկոստէ, յիսնեորդ օր ի Ջատկէն).**

Օրվա մեծ տոնի առիթով Մայր տաճարում
հանդիսավոր ս. պատարագ է մատուցում
Վեհափառ Հայրապետը:

Ժամը 11-ին, եկեղեցական թափորով,
ամպրոպանու տակ, Մայր տաճարի գանգե-
րի ավետավոր ղողանջների ներքո, Վեհա-
փառ Հայրապետը առաջնորդվում է Մայր
տաճար՝ քջապատված պոլսահայ, լիբանա-

նահայ, սիրիահայ (Դամասկոսից) և այլ
երկրներից ժամանած ուխտավորների մեծ
բազմությամբ:

Հայրապետական ամպրոպանին կրում են
Դամասկոսի Հ. Բ. Ը. միության հայ երի-
տասարդաց ընկերության (Հ. Ը. Ե.) ան-
դամները, որոնք ուխտավորաբար ժամանել
են Մայր Աթոռ՝ իրենց գլուխ ունենալով թե-
մի թեմական ժողովի ատենապետ Բյուզանդ
Յագուպյանը:

Մայր տաճարը լիքն է հավատավոր բազ-
մությամբ:

Ս. պատարագը շարունակվում է մինչև
«Հայր մեր»:

Օրվա եկեղեցական մեծ տոնի հոգևոր և
պատմական նշանակության մասին քարո-
զում է պատարագիչ Հայոց Հայրապետը՝
«Եւ լցան ամենեքեան Հոգով սրբով» նշա-
նաբանով, վեր հանում ս. Հոգու գալստյան
և էջքի հրաշագործ նշանակությունը քրիս-
տոնական եկեղեցու հիմնադրման և ապա
շուրջ 2000 տարի ընդհանրական եկեղեցու
առաջնորդության ճանապարհի վրա:

Հավարտ ս. պատարագի Հայոց Հայրա-
պետի ձեռքից հաղորդություն են ստանում
ուխտավորներից շատերը:

Այնուհետև հանդիսությամբ և եկեղեցա-
կան թափորով Հայոց Հայրապետը առաջ-
նորդվում է Վեհաբան, ուր քարեհանձում է
ընդունել ս. Էջմիածին ժամանած վերոհիշ-
յալ ուխտավորների խումբը, հետաքրքրվում
նրանց եկեղեցական, համայնքային ու ազ-

գային կյանքով, օրհնում բոլորին և թելադրում նրանց վերադարձին իր հայրական օրհնություններն ու ուղջությունները տանել իրենց թեմերի հայ հավատացյալ ժողովրդին: Ընդունելության ժամանակ, հսկում սփյուռքի ողջ հայության և ի մասնավորի Ստամբուլի հավատավոր և բարեպաշտ ժողովրդի, որդիական երախտագիտության ջերմ խոսք է ասում Ստամբուլի հայոց Գալֆայան որբանոցի խնամակալության անդամ Կարայիս Ուղտըլյանը:

«Վեհափառ Տեր,

Երկար տարիներ մեր պատմական հայրենիքը ու մեր սիրտ և հավատքի լուսադրություն՝ ս. Էջմիածինը մեր պապական հոգիներուն համար հեռավոր և անմատչելի երազ մըն էր որուն կծուեցին մեր բոլոր իղձերը, մեր էության բոլոր մասնիկները:

Այսօր այդ երազին իրականացումը կարինք մենք և անպատմելի բերկրանքով գունդ առ գունդ կոչմանը դեպի մկրտական կեդրոնը ուր կցույցնա հայուն մաքուր հոգին ու ջինջ հավատքը, դեպի այս կարոտալի հովերը ուր մեր ցեղը հազարամյակներու ընթացքին տառապեր ու տքներ է, բայց հոգեկան թե մտավորական մարզերու մեջ հասեր է քաղաքակրթական ամենաբարձր մակարդակներու և յուրացուցեր է քրիստոնեական բարոյականի գերագույն տեսականները:

Մենք յոթնհայերս հանրապետական Թուրքիո մեջ վայելած մեր ազատություններուն և համայնքային մեր հին կազմակերպություններուն մեզի ընձեռած առավելություններուն շնորհիվ, կշահանք անվթար պահել մեր տոհմիկ մշակույթին անգին գանձերը և մեր ցեղային բարոյական բարձր արժանիքները, միևնույն ատեն իբր լավ քաղաքացիներ մեր կառելին ընելու Թուրքիո բարգավաճման և վերելքին համար:

Անսահման է այսօր մեր ուրախությունը երբ կտեսնենք թե մեր պատմական հայրենիքին մեջ իրականությունը կգերազանցե մեր բոլոր երազները և երբ մեր կյանքին մեծագույն երջանկությունը կապրինք այս սրբաշունչ մթնոլորտին մեջ համայն սզգին ամենասիրելի Պետին, մեր պաշտելի Վեհափառ կաթողիկոսին անբկայանալու բարձր պատիվը վայելելով:

Վեհափառ Տեր, մոտ երկու ամիսն է Վերսալիին հուզումով հետևեցանք Ձերդ Վեհափառության անհանգստության լուրերուն, այսօր մեն հրճվանքով և մեր սեփական աչքերով կտեսնենք Ձեզ կազդուոված, յոթնհայությունն ալ իր անգոր շրթներով կատարյալ առողջության մաղթանքները կը միացնե Վեհիդ:

Մեր հավատքի անյստատակի սյունին,

մեր փառաբեղ Մայր եկեղեցվույն սուրբ Էջմիածնին լուսանաճանչ պայծառության համար մեր ամենաջերմ և սրտաբուխ մաղթանքները ներկայացնելով, խորին ակնածանքով մատչիմք ի համբույր ս. Աթույթ:

Բոլոր ուխտավորներն այնուհետև աջահամբույրով ստանում են Հայոց Հայրապետի օրհնությունները՝ հոգեպես մխթարված ու խանդավառված:

Ժամը 15-ին Վեհափառի սեղանատանը, ի պատիվ Դամասկոսի Հ. Բ. Ը. միության Հայ երիտասարդական ընկերակցության ասպետների, որոնց խմբում էին նաև Դամասկոսի թեմականի մի քանի անդամներ, տղովում է պաշտոնական ընդունելություն, որն անցնում է ջերմ, հայրենասիրական մթնոլորտում:

Հայոց Հայրապետը ողջունում է և կրկին բարի գալուստ մաղթում արք. Բյուզանդ Յագուպյանի ատենապետության Դամասկոսի թեմի թեմական ժողովի անդամներին և Հ. Ե. Ը.-ի ասպետներին՝ նրանց բարեմաղթելով համերաշխ, եկեղեցաշեն գործունեություն իրենց աշխատանքում:

Հարգելի ուխտավորներին և հյուրերին խանդավառ ճառով ուղջունում է նաև «Էջմիածին» ամսագրի խմբագիր Արթուր Հատիսյանը:

Ճաշկերույթի ավարտին Հայոց Հայրապետը հուշանվերներ է բաժանում բոլոր ներկաներին, որոնք հրաժեշտ են առնում Ն. Ս. Սնույթունից և Մայր Աթոռից անմոռանալի տպավորություններով:

Հունիսի 12-ին, երեքշաբթի.—Այսօր հոգեվոր ճեմարանի ուսանողությունն ու դասախոսական կազմը մեկնում են ամսվերջի չորսօրյա պտույտի՝ դեպի Ալստեի հովտի պատմական հուշարձանները:

Հունիսի 17-ին, կիրակի.—Յիշատակ Եղիայի մարգարեին:

Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Արսեն Ժ. վրդ. Բերբերյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում՝ «Ձեզ նմանի կարօտին ամենայն հոգիք միացեալք սրբութեամբ և սիրոյն Քրիստոսի» (շարական) բնաբանով:

Հունիսի 18-ին, երկուշաբթի.—Սրբոց կուսանացն Հռիփսիմեանց:

Այսօր ս. Հռիփսիմե տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Եղիշե քին. Բաղրամ-

յանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում
«Անձինք նուիրեալք սիրոյն Քրիստոսի»
(Հարական) քննաբանով:
Ս. պատարագին ներկա են լինում Մայր
Աթոռի միաբանությունն ու հոգևոր ճեմա-
րանի ուսանողությունը:

Հունիսի 19-ին, երեքշաբթի.—Սրբոց Կու-
սանացն Գայիանեանց.

Այսօր ս. Գայանե տաճարում ս. պատա-
րագ է մատուցում տ. Գուրգեն քին. Աշուր-
յանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում հա-
վոր պատշաճի:

Ս. պատարագին ներկա են լինում Մայր
Աթոռի միաբանությունն ու հոգևոր ճեմա-
րանի ուսանողությունը:

Հունիսի 21-ին, հինգշաբթի.—Տօն սրբոյն
Յովհաննու Կարապետին և Աթանագիենայ
եպիսկոպոսին.

Այսօր ս. Շողակաթ տաճարում ս. պա-
տարագ է մատուցում տ. Աուսքել քին. Խա-
չատրյանը:

Ս. պատարագին ներկա են լինում Մայր
Աթոռի միաբանությունն ու հոգևոր ճեմա-
րանի ուսանողությունը:

Հունիսի 28-ին, շաբաթ.—Սրբոյն Գրիգո-
րի Լուսաորչին մերոյ ելն ի վերապէն.

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է
մատուցում տ. Բագրատ արդ. Գալստյանը
և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Յորժամ
Արդարն կացցէ բազում համարձակութեամբ
հանդէպ նեղչաց իւրոց» (Իմաստ. Սողոմո-
նի Ե 1) քննաբանով:

Հունիսի 24-ին, կիրակի.—Տօն Կարոսի-
կէ ս. Էջմիածնի.

Մայր տաճարում ս. պատարագ է մատու-
ցում տ. Աղան վրդ. Բալիոզյանը և «Հայր
մեր»-ից առաջ քարոզում հավոր պատշա-
ճի:

Հունիսի 26-ին, երեքշաբթի.—Այսօր Մայր
Աթոռ է այցելում հյուրաբար Հայաստանում
գտնվող ամերիկյան մասնագետների պատ-
վիրակությունը՝ ԱՄՆ-ի ազգային գիտական
ֆոնդի ինֆորմացիոն ծառայության ղեկա-
վար Լի Բերգենայի գլխավորությամբ:

Պատվիրակության անդամներն այցելում
են Մայր տաճար, եկեղեցական արվեստնե-
րի յանգարան:

Այնուհետև հյուրերին ընդունում է Ամե-
նայն Հայոց Վեհափառ Հայրապետը և սըր-
տագին զրոյց ունենում նրանց հետ:





ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ


Ա. Ներսես Շնորհալու մահվան ութնապարամյակին նվիրված՝ Տանն Կիլիկիո Տ. Տ. Խորեն Ա կաթողիկոսի 6 ապրիլ 1973 թվակիր կոնդակի նախագրման ձևը մի նոր աճօրինական արարք է, որի համար Մայր Աթոռ Սուրբ Էջմեղիմ մերժել այն, քանի որ Տանն Կիլիկիո գահակալն իրավասություն չունի «Ամենայն Հայոց կաթողիկոս» տիտղոսը օգտագործելու և ոչ էլ կոնդակ ուղղելու իր Աթոռից դուրս՝ մեր նվիրապետական Աթոռներին, թեմերին և համայն մեր ժողովրդին:

Շատ տխուր է հաստատել, թե նաև այսպիսի նվիրական առիթով, ինչպիսին Ամենայն Հայոց Շնորհալի սուրբ Հայրապետի ոգեկոչումն է, Աճյոխասի գահակալը վերստին դրսևորում է անպատասխանատու գործելակերպ:

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՐԻ

18-ը հունիսի 1973 թ.,
Ա. Էջմիածին





ԱՄՍՎԵՐՋԻ ՀԱՆՐԱՍՈՒԹՅՈՒՆ ՀՈԳԵՎՈՐ ԾԵՄԱՐԱՆՈՒՄ

Հոգևոր ճեմարանի ամսվերջի հանդիսությունը տեղի ունեցավ հունիսի 11-ին, երկուշաբթի օրը, ժամը 12-ին, ճեմարանի հանդիսությանց սրահում՝ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի քարձր նախագահությամբ:

Հանդիսությունը ներկա էին Մայր Աթոռի միաբանությունը, ճեմարանի դասախոսական կազմը, մայրավանքի պաշտոնեությունը և ուսանողների բազմաթիվ ծնողներ:

Որոշյալ ժամին Վեհափառ Հայրապետը, շրջապատված քարձրաստիճան հոգևորականներով, ծափողջույնների տակ մուտք է գործում դահլիճ:

Հանդեսն սկսվում է Վեհափառ Հայրապետի աղոթքով, որից հետո ունկնդրվում է Հայկական ՍՍՀ պետական հիմնի նվազը, դաշնամուրի վրա:

Ապա ճեմարանի երգչախումբը կատարում է «Ճեմարանի քայլերգ»-ը:

Հանդեսը բացում է ներածական-հուզիչ խոսքով հոգևոր ճեմարանի դասախոս տ. Աղան վրդ. հայրոգյանը՝ վեր հանելով անցյալ տարում հոգևոր ճեմարանի հարկի տակ կատարված ուսումնա-դաստիարակչական աշխատանքների կարևորությունը:

Այնուհետև հանդես է գալիս հոգևոր ճեմարանի տեսուչ տ. Հովհաննես քհն. Մարությանը, որն իր տարեկան զեկուցման մեջ ներկայացնում է համառոտ, բայց ամբողջական պատկերը 1972—1979 ուսումնական տարեշրջանում հոգևոր ճեմարանից ներս կատարված ուսումնա-դաստիարակչական աշխատանքների:

«Վեհափառ Տեր.

Ա. Էջմիածնի հոգևոր ճեմարանը բոլորեց 1972—79 ուսումնական տարեշրջանը: Հոգևոր ճեմարանը եղել և մնում է համայն հայության հույսի և լույսի աղբյուրը, որտեղ դարեր շարունակ դարձնվել են ու այսօր էլ դարձնվում են եկեղեցական ասպարեզում իրենց կոչմանը գիտակից պատանիների հոգիները:

Հոգևոր ճեմարանի տեսչության համար դժվար պիտի լիներ հաջող ուսումնա-դաստիարակչական գործունեություն ծավալել, եթե չլինեին ճեմարանի դասախոսական կազմի և մանավանդ Ամենայն Հայոց Հայրապետի անմիջական օժանդակությունն ու օրհնությունը:

Ուսումնական տարվա սկզբին ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանի ուսանողների ամբողջական թիվը 42 էր: Այսօր ճեմարանում սովորում են 81 ուսանողներ:

Ճեմարանի 6 սաներ մեկնել են քանակ՝ իրենց քաղաքացիական պարտքը կատարելու: 5 ուսանողներ ինքնակամ հեռացել կամ հեռացվել են ճեմարանից այլևայլ պատճառներով: Ճեմարանում ներկայումս սովորում են.

Գ լսարանում—4 սարկավազ	
Բ » —7 »	
Ս, » —4 ուրարակիր	
Գ դասարանում—5 ուսանող	
Բ » —7 »	
Ա, » —5 »	

Ճեմարանի ուսանողներից 14-ը օտարահայատակներ են՝ եկած Մերձավոր Արևելքի երկրներից և Ռումինիայից:

Ունեցանք նաև համալսարանալսարտ երկու մասնավոր ուսանողներ (Ֆորբերտ Նազարյան և Աղվան Գասպարյան), որոնք պատրաստվում են մտնելու հոգևոր ասպարեզ:

Հոգևոր ճեմարանի դասախոսական կազմի գլուխ կանգնած է ազգիս Հայոց Տ. Տ. Գազզեն Ա կաթողիկոսը: Հոգևոր ճեմարանի դասախոսական կազմը այս տարի ևս իր կարելին արեց մեր սաների մտավոր, հոգեկան և ֆիզիկական դաստիարակության համար:

Այս ուսումնական տարում Հյուսիսային Ամերիկայի Կալիֆոռնիայի թեմից Մայր Աթոռ հրավիրվեց տ. Արիս ծ. վրդ. Ծիրվանյանը՝ յսարանական բաժնում կրոնական առարկաներ դասավանդելու համար և նաև որպես փոխ-տեսուչ:

Հոգևոր ճեմարանի դասախոսական կազմը հետևյալն է.

Վեհափառ Հայրապետ, Արիս ծ. վրդ. Ծիրվանյան, Աղան վրդ. Բալիոզյան, Մառիս արքեպ. Գալուտյան, Տիրան արքեպ. Կյուրեղյան, Հովհաննես քհն. Մարության, Արթուր Հատիտյան, Պարզև Ծաֆազյան, Գրիգոր Գյուլյան, Սամվել Անդուսյան, Կամսար Ավետիսյան, Նրվանդ Մելքոնյան, Խաչատուր Ներսիսյան, Արամ Սահակյան, Բարսեղ Թաշյան, Սարգիս Իյնեջյան, Խորեն Մեյխանեջյան, Հարություն Սիմոնյան, Թադևոս Ասմարյան:

Այս տարի տեսչի օգնական դաստիարակ-վերակազմողներ էին Տիրան արքեպան, Բարսեղ Թաշյանը, Հարություն Թեյոզյանը և Արամ Արուստի: Նրանք տեսչի և փոխ-տեսչի հսկողության տակ ձեռք-ձեռքի տրված իրենց կարելին արեցին ճեմարանի կարգապահությունը բարձր պահելու համար:

Ծնորհակալության արժանի են մեր դասախոսների և դաստիարակների կատարած աշխատանքները:

Հոգևոր ճեմարանը գիշերօթիկ դպրոց է, ուստի ուսանողների առօրյա կյանքի յուրաքանչյուր ժամը կազմակերպված է:

Հոգևոր ճեմարանի տեսչությունը ուսանողության ուսումնա-դաստիարակչական աշխատանքները արդյունավետ դարձնելու համար իր կարելին է արել:

Ծրագրով նախատեսված դասավանդություններից զուգահեռ հոգևոր ճեմարանի տեսչությունը ամենօրյա ուսումնա-դաստիարակչական աշխատանք է տարել ճեմարանի սաների կրթական և մտավոր մա-

կարդակը բարձրացնելու համար:

Այս իմաստով ամենաբեղմնավոր աշխատանք է կատարել Վեհափառ Հայրապետը՝ դասախոսություններով, հայրական խորատներով ու գրույցներով:

Հոգևոր ճեմարանի հարկի տակ տեղի են ունեցել հետևյալ զեկուցումները, հանդիսությունները.

ա) Ընդունելություն վրաց Պատրիարք-կաթողիկոս Ն. Սրբություն Տ. Դավիթ Ն-ի և նրա շքախմբի անդամների.

բ) «Վահագրագելիչ միջոցներ հիվանդությունների դեմ»—զեկուցող՝ բժիշկ Կարո Նարայանյան՝ ԱՄՆ-ից.

գ) Ընդունելություն լատաց Պատրիարք Ն. Սրբություն Ծեմոդայի և նրա շքախմբի անդամների.

դ) Հանդիպում բարերար Հայկ Գավուրճյանի և նրա տիկնոջ հետ՝ ԱՄՆ-ից.

ե) Մոզակյան լապտերներով ցուցադրություն պատմական Հայաստանի տեսարժան վայրերը Հովհաննես Մերեճյանի կողմից՝ Բելյուս.

զ) Ընդունելություն ռուսաց Պատրիարք Ն. Սրբություն Պիմենի և նրա շքախմբի անդամների.

է) Ընդունելություն Արտասպետի հայոց պատրիարք տ. Նիկիտ արքեպիսկոպոս Տերտերյանի.

ը) Տ. Արսեն ծ. վրդ. Բերբերյանի՝ դոկտորային իր թեզի ներկայացնելը Մայր Աթոռի միաբանության, ճեմարանի ուսանողության և դասախոսական կազմի ներկայությամբ.

թ) Ամանորի տոնակատարություն.

ժ) «Կոմիտաս վարդապետի նորահայտ երգերը»—զեկուցող՝ Ռոբերտ Աթալան: Երգերը կատարել է Երևանի կրուպակյայի անվան դպրոցի երգչախումբը.

ժա) «Կուպեռիկոսի 500-ամյակը»—զեկուցող՝ տիկին Էլմա Պարսամյան.

ժբ) Վարդանանց հերոսամարտի տոնակատարությունը—զեկուցող՝ Արամ Սահակյան.

ժգ) Նրելո՝ Գլիդվան Գրիգոր Նարեկացու ստեղծագործություններից—աամուքող՝ տիկին Սիրվարդ Մեսրոպյան:

Հոգևոր ճեմարանի սաները անխտիր ամեն շաբաթ կինոնկարներ, թատերական ներկայացումներ և երաժշտական համերգներ են դիտել կամ ունկնդրել Էջմիածնի և Երևանի կինոթատրոններում ու համապատասխան ալյևալ թատերական սրահներում:

Հոգևոր ճեմարանի գրադարանը (գրադարանալսար՝ Տաճատ Վարդանյան) և հիվանդանոցը (բժիշկ՝ Ֆելիքս Գրիգորյան) կանո-

նավորապես շարունակել են աշխատանքները: Ուսանողներից 8 հոգի ենթարկվել են այլևայլ տեսակի գործողությունների:

Կանոնավոր ընթերցումներ, հետազոտական և դիտումներ, ձմեռային մարզանքներ և խաղեր են տեղի ունեցել ճեմարանի համապատասխան սրահներում:

Այս տարի ուսանողությունը գնացել է ձմեռային մի քանի էքսկուրսիայի՝ Ծաղկաձոր և ապա վերջերս՝ ուխտագնացություն Մուղնու և Գևորգ, Օհանավանք և Սաղմոսավանք:

Հունիսի 12-ին հոգևոր ճեմարանի ուսանողությունը և դասախոսական կազմը կը մեկնեն 4-օրյա պտույտի: Ծրագրված է այցելել Դիլիջանի մոտիկ Հաղարծնի, Մակարա և Գոշավանքերը, Պարզ լիճ և այլն:

Հոգևոր ճեմարանն այս տարի տվեց իր հերթական հունձը: Ուրախությամբ ճշում ենք, որ այս տարի ունեցանք հինգ ավարտող սարկավագ-ուսանողներ: Վրեժ սրկ. Նաջարյան, Սամվել սրկ. Պետրոսյան, Ավետիք սրկ. Արաքսյան, Հակոբ սրկ. Նաչատրյան, Ռոբերտ սրկ. Նազարյան, որոնցից վերջինը մասնավոր ուսանող է: Նրանք շուտով, այս ամսվա վերջին, կապառնվեն իրենց դիպլոմային աշխատանքները:

Այս տարի Բ լսարանի 9 սաներ՝ Աղաքանյան Հրանտ, Արթինյան Ավետիս, Զմբրուխյան Հակոբ, Զմբուխյան Գրիգոր, Մարգարյան Միսակ, Նալբանդյան Վաչե, Սարգսյան Հարություն, Քեչիջյան Գրիգոր և մասնավոր սան Ռոբերտ Նազարյան, ցանկություն հայտնեցին ձեռնադրվել սարկավագ: Տեսչությունը հարգելով նրանց խնդրանքը, միջնորդեց Հայոց Հայրապետի մոտ՝ ստանալու Նյա քարեհան կարգադրությունը: Ձեռնադրության կարգը կատարեց լուսարարապետ տ. Հուսիկ եպս. Սանթրուքյանը՝ ս. Ստեփանոսի տոմին: Ուրարակիր դարձան Ա լսարանի 5 սաներ՝ Զատիկյան Հարություն, Հովնաթյան Կիրակոս, Ղազարյան Հովհաննես, Ծմավոնյան Բաբկեն, Մանուկյան Սարգիս, և դպրության աստիճան ստացան Գ դասարանի 8 սաներ՝ Ալոյան Օնիկ, Բարսեղյան Աղասի, Ծառուկյան Գրեգոր, Գյուլանջյան Նաչիկ, Քեչիջյան Վահրամ:

Վեհափառ Տեր, հոգևոր ճեմարանի տեսչությունը խոստովանում է, որ մեր աշխատանքների մեջ ևս կան թերություններ: Ամենադժվար աշխատանքը սերունդ պատրաստելն է, սերունդ, որն իր նախնիների կենդանի օրինակը ունենալով իր համար որպես մտատիպար, սերունդ, որն անցյալով խանդավառված կերտեր նորը, որը լինելու և ավանդապահ և ժամանակակից, նոր եռան-

դով և համարձակությամբ քարոզեր Քրիստոսի Ավետարանը և մեր եկեղեցու պատմության կառույցի վրա աշխատանքի արդար քրտինքով իր բաժինը բերել՝ իր հերթին դառնալու համար օրինակելի՝ հետագա սերունդների համար:

Սիրելի սաներ, հուզիչ է պահը, պատմության գիրկն է անցնում ձեր պատանեկության ամենամաքուշ տարիներից մեկը: Գիտակցե՛ք ձեր ուժերը և օրըստօրե ձգտեցե՛ք կատարելության, ավելացրե՛ք ձեր գիտելիքները և կերտեցե՛ք ձեր մեջ ազնիվ, գիտակից, հայրենամարտի, եկեղեցասեր մարդը: Մեր եկեղեցու փառավոր անցյալը լինի ձեր կյանքի ուղեհիշը, քայլեցե՛ք համարձակությամբ, ձեզ հետ է հայ եկեղեցու պատմությունը, ձեզ հետ է ձեր հարազատ հայ ժողովուրդը:

Ծուռով ձեզանից շատերը կմեկնեն իրենց ծնողների մոտ արձակուրդի, մի մասն էլ կմնա իր աշխատանքը շարունակելու Մայր Աթոռում: Մաղթում ենք ձեզ քաջառույցություն և արձակուրդի քարի վայելում:

Պարտականություն ունեն այս առթիվ իմ շնորհակալական խոսքը ասելու թուր անձանց և հաստատություններին, Մայր Աթոռի միաբանությանը և պաշտոնեությանը, որոնք իրենց նյութական, բարոյական, եղբայրական վերաբերմունքով և զոհողությամբ օժանդակեցին հոգևոր ճեմարանի տեսչությանը, որպեսզի ճեմարանի ուսումնական և դաստիարակչական աշխատանքները լինեն բնականոն, իրենց բարձրությամբ վրա:

Վեհափառ Տեր, համառոտ այս հաշվետվությունից հետո թույլ տվե՛ք հոգևոր ճեմարանի դասախոսական կազմի և ուսանողության կողմից համբուրել Ձերդ Սրբության Աջը, մաղթելով Ձեզ բեղմնավոր և առողջ տարիներ՝ հայ եկեղեցու և ճեմարանի առավել պայծառացման համար:

Հոգևոր ճեմարանի երգչախումբը, եվրոպական երաժշտության դասախոս Խորեն Մելիքանեջյանի շնորհալի ղեկավարությամբ, կատարում է «Էջ Միածինն ի Հօրէ», «Որք զարդարեցին» շարականները և «Ահա ծագեց», «Ազնիվ ընկեր», «Ողջույն տվեք» (Մ. Եկմալյան), «Արփա-Սևան» (Է. Հովհաննիսյան) խմբերգերը: Ա լսարանի սան Սարգիս Քյոսամանուկյանը արտառանգում է Դ. Վարուժանի «Նաչբուռ» բանաստեղծությունը, Բ լսարանի ուսանող Ավետիս սրկ. Արթինյանը ռուսերեն լեզվով՝ Ս. Եսենկինի «Ծագան»-ն, նույն լսարանի ուսանող Գրիգոր սրկ. Զմբուխյանը անգլերեն լեզվով՝ Շեքսպիրի հանրահայտ «Լինել», թե՛ չլինել»-ը «Համբետ»-ից, Ա դասարանի սան

Հովսեփի «Դարբգրանք» Հ. Հովհաննիսյանի «Էջմիածին» բանաստեղծությունը: Բ լուս-
րանի ուսանող Գրիգոր սրկ. Ջմրուխտյանը
դաշնամուրի վրա կատարում է Ստ. Նաղդ-
յանի «Անձրեն եկավ»-ը, Բ դասարանի
սան Խաչիկ Մարտիրոսյանը՝ Աբրահամյա-
նի «Երգ առանց խոսքի» ստեղծագործու-
թյունը:

Ի դիմաց հոգևոր ճեմարանի ողջ ուսանո-
ղության և մասնավորապես շրջանավարտ
հինգ սարկավագների, նրախտագիտության
և շնորհակալության իր խոսքում Գ լսարա-
նի ուսանող Սամվել սրկ. Պետրոսյանն ա-
սում է.

«Վեհափառ Տեր,
Լո՛ւ է եմ զանգերը:

Անդորրություն է այժմ հոգևոր ճեմարա-
նում:

Եվ խնդություն է բոլորիս դեմքերին:

Մեզ համար նվիրական դարձած այս
հարկի տակ գլորվում, անցնում են տարի-
ները: Նրանցից յուրաքանչյուրն իր հետ բե-
րում է խնդություն և դառնություն. երկու
հակառակ երևույթներ, որոնք սակայն միա-
ծուլվում են միմյանց հետ և կազմում մարդ-
կային կյանքի հետաքրքրության առանցքը:
Նրանցից որևէ մեկի բացակայությամբ այլ-
ևս անհիմատ կդառնա կյանքը մեզ հա-
մար:

Անցկատելիորեն անցնում են տարիները:
Նրանցից յուրաքանչյուրը մեզ է նվիրում յու-
րահատուկ մի հարստություն, ամենալթա-
կագինը աշխարհում՝ կյանքի փորձ և կրթու-
թյուն: Այս երկուսը կերտում են մեր հոգի-
ները, մեզ հույս և եռանդ ներշնչում մեր ա-
պագա գործունեության նկատմամբ, որքան
էլ այն դժվար և անհաղթահարելի լինի:

Ու այս հարկի տակ կերտվում են մեր
հոգիները, կերտվում Աստծո հովանու ներ-
քո, Ձեր օրհնության ներքո, կերտվում
քրիստոնեության շնչով, մարդասիրության
շնչով:

Այս հարցում մենք պարտական ենք
մեր սիրելի դասախոսներին: Նրանցից յու-
րաքանչյուրը մեծագույն հաճությամբ և
պարտքի զգացումով գիտության հետ մեկ-
տեղ մեզ սովորեցնում է, թե ինչպես պետք
է ապրել, մեզ թելադրում, թե ո՞րն է ճիշտ,
ս՞րը սխալ...

Նրանք սիրով բացում են իրենց մտքի և
հոգու դարպասները և մեզ տալիս այն ամե-
նը, ինչ որ մենք կարող ենք առնել:

Ու այս ամենի համար, սիրելի դասախոս-
ներ, մենք միաբերան ասում ենք.

— Ծնորհակալություն:

Այսօր, ամավերջի այս պահին, հավաքվել
ենք այստեղ՝ մեր այս տարվա աշխատանքի

նուստիցման հունիլի տրամադրությունը կա-
տարելու:

Մենք՝ ուսանողներս, վառատակել ենք
շատ:

Դուք՝ դասախոսներդ... սխալ է ասել, թե
դուք վատնել եք: Ընդհակառակը՝ դուք վառ-
տակել եք գրեթե նույնքան, որքան մենք, և
նույնիսկ մի քիչ էլ ավելի:

Դուք մեր տրամադրության տակ եք դրել
ձեր գիտելիքները և կյանքի փորձը: Մենք
առատորեն օգտվել ենք դրանցից: Վերցրել
ենք՝ յուրաքանչյուրս որքան կարող է:

Այո, վերցրել ենք:

Բայց դուք չեք վատնել: Դա նման է արե-
գակի լույսին, մշտահոս աղբյուրին... Իսկ
սեր վաստակածը ձեր վաստակածն է: Դա
ճշմարտություն է և հաճելի ճշմարտություն:
Անցկատելիորեն գլորվում են տարիները:

Դեռ երեկ էր կարծես, երբ մեզանից յու-
րաքանչյուրը, դեռահաս մի պատանի, ոտք
դրեց ճեմարանի շենքից ներս:

Ու այսօր, խանդավառ ու վաստակած,
հրաժեշտ ենք տալիս նրան՝ իրեն ուսանող-
ներ:

Ճեմարանը մեզ շատ բան տվեց, քայց չի
կարելի ասել, թե ամեն ինչ: Նա միայն հիմ-
քը դրեց մեր հոգու և մտքի մեջ: Իսկ այդ
հիմքի վրա մենք պետք է բարձրացնենք
մեր տաճարները: Եվ կքաղաքացնենք:

Մենք խոստանում ենք:

Վեհափառ Տեր,

Ավելորդ է այժմ խոսել այն սիրո և գորո-
վանքի մասին, որ Դուք տածել եք մեր
հանդեպ անցնող տարիների ընթացքում:

Դա հայտնի է բոլորիս:

Այժմ, երբ մենք կյանք ենք մտնում, տվեք
մեզ Ձեր հայրական օրհնությունը, և թող
այն ուղեկցի մեզ մեր ողջ կյանքում:

Թույլ տվեք, Վեհափառ հայր, հաճուն հո-
գելոր ճեմարանի ուսանողության, հաճուն
այս ուսումնական տարեշրջանի շրջանա-
վարտների, մատչելի ի համբույր Ձեր ս. Ա-
ջիմ և ստանալ Ձեր հայրական օրհնությու-
նը»:

Այնուհետև տեսուչ տեր հայրը ներկայաց-
նում է հոգևոր ճեմարանում ուսման մեջ ա-
ռաջադեմ ուսանողների անուններն ըստ
հետևյալի.

Գ լսարան

9.50 միջինով առաջինն է քարեշ. Ավե-
տիք սրկ. Արաքաջյանը.

9.45 միջինով երկրորդն են հանդիսանում՝
քարեշնորհ Վրեժ սրկ. Նաչաթյանը և բա-
րեշ. Սամվել սրկ. Պետրոսյանը:

Բ լսարան

8.80 միջինով առաջինն է քարեշ. Գրիգոր
սրկ. Ջմրուխտյանը.

8.58 միջինով երկրորդն է վաչե արկ.
հալրանդյանը:

Ա լարան

8.91 միջինով առաջինն է Սարգիս Բյուս-
ւանուկյանը:

8.20 միջինով երկրորդն է Հարություն
Զատիկյանը:

Գ դասարան

8.60 միջինով առաջինն է Խաչիկ Գյու-
լանջյանը:

8.20 միջինով երկրորդն են՝ Ռուբեն Գրի-
գորյանը և Ադասի Բաբուջյանը:

Բ դասարան

9.70 միջինով առաջինն է Խաչիկ Մար-
տիրոսյանը:

8.00 միջինով երկրորդն է Լևոն Բաղդա-
սարյանը:

Հոգևոր ճեմարանի տեսչությունը գերա-
զանց վարքի համար պարգևատրել է Խա-
չիկ Մարտիրոսյանին (Բ դասարան) և Հով-
սեփ Պալըգյանին (Ա դասարան):

Սեղանի թեմիսի առաջնության հաղթողի
առաջին մրցանակը սրվում է բարեջն. վա-
չե արկ. Նալբանդյանին, իսկ տամայինը՝
բարեջն. Գրիգոր արկ. Զմրուխտյանին:

Ուսման և վարքի մեջ աչքի ընկած ու մըր-
ցանակի արժանացած ուսանողները ծախ-

ողջողոցների տակ մոտենում են վեհափառ
Հայրապետին և աջահամբույրով ստանում
իրենց նվերները:

Հանդեսի փակման և օրհնության խոսքով
հանդես է գալիս վեհափառ Հայրապետը,
գնահատում և օրհնում ճեմարանի հարկից
ներս կատարված դասախոսների համեստ
ու շնորհալի աշխատանքը, իսկ ուսանողնե-
րին հորդորում է լինել աշխատասեր, քարի
ու առաքինի՝ իսկական, քարոյական քարձր
նկարագրի տեր մարդ դառնալու համար:

Վեհափառ Հայրապետը, նկատի ունենա-
լով հոգևոր ճեմարանի տեսուչ տ. Հովհան-
նես քհն. Մարությանի երկարամյա, անբա-
սիր գործունեությունը Մայր Աթոռում, որ-
պես տիպար հոգևորական և փորձառու,
խոհեմ մանկավարժ, հայրապետական
մասնավոր կոնդակով նրան շնորհում է ա-
վագության աստիճան:

Հոգևոր ճեմարանի հարկի տակ 1972—
1973 ուսումնական տարվա ամսվերջի
հանդեսն ավարտվում է խմբովին երգված
Տերունական աղոթքով և վեհափառ Հայ-
րապետի «Պահպանիչ»-ով:

Հանդիսության ավարտին ճեմարանի դա-
սախոսական կազմն աջահամբույրով ստա-
նում է Հայոց Հայրապետի օրհնությունը:





ԼՈՒՐԵՐ ԹԵՄԵՐՈՒՑ

ՍԱՐԳԱՐԱՊԱՏԻ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԻ
ՏՈՆԱԽՄԲՈՒԹՅՈՒՆ ԼՈՆԴՈՆԱՀԱՅ
ԳԱՂՈՒԹՈՒՄ

Մայիսի 27-ին, կիրակի օրը, Հայոց Հայրապետի 1972 թվականի սեպտեմբերի 3 թվակիր կոնդակի հրահանգի համաձայն, լոնդոնահայ գաղութը եկեղեցական ու ազգային հանդիսությամբ տոնախմբում է հիշատակը Սարդարապատի ճակատամարտի մահատակների՝ հերոսամարտի 55-րդ տարեդարձի առիթով:

Լոնդոնի ս. Սարգիս եկեղեցում, օրվա հանդիսության առիթով, պատարագել է հոգեվոր հովիվ և Մայր Աթոռի միաբան տ. Ներսես ծ. վրդ. Պողոսյանը և «Հայր մեր»-ից առաջ, օրվա տոնի մասին, ոգեշունչ քարոզ է խոսել՝ «Սակայն բազում գործք արությունեմ գտանին գործեալ և ի մերում աշխարհիս, և արժանի գրոյ յիշատակի...» (Մովսես Խորենացի) քննադատել:

Ս. պատարագի հոգեպարար երգեցողությունը կատարել է ս. Սարգիս եկեղեցու երգչախումբը՝ Ե. Միսիրյանի ղեկավարությամբ: Ս. պատարագի երգեցողությանն իր մասնակցությունն է բերել Լոնդոնում գտնվող

վոդ հայրենարձակ երգչուհի օրիորդ Մարի Պողոսյանը:

Հավարտ ս. պատարագի կատարվել է Սարդարապատի հերոս մահատակների հիշատակին նվիրված մասնավոր հոգեհանգրվանում արարողություն:

Այնուհետև օրվա հանդիսության առիթով ս. Սարգիս եկեղեցուն կից Նվարդ Լյուլպենկյան սրահում տեղի է ունեցել ճաշկերույթ-հանդես, որին իրենց մասնակցությունն են բերել շուրջ երկու հարյուր հրավիրյալներ: Ծաշկերույթի ժամանակ տ. Ներսես ծ. վարդապետը, Ս. Գապարաճյանը, Հ. Փալամուտյանը, Ա. Կյուզելյանը, Կ. Փափազյանը հանդես են եկել «ոգևորիչ և սրբտաքովի» ճառերով:

Ծաշկերույթ-հանդեսի ժամանակ գործադրության է դրվել նաև գեղարվեստական մի գեղեցիկ ծրագիր: Ս. Սարգիս եկեղեցու երգչախումբը Ե. Միսիրյանի ղեկավարությամբ կատարել է «Սարդարապատի քաջեր» և «Էրբերունի» խմբերգերը: Զ. Ծամյանը դաշնամուրի վրա նվագում է Ա. Խաչատրյանի «Սուսերով պար»-ը: Ա. Կյուզելյանն արտասանում է Հ. Շիրազի «Իմ սուրբ հայրենիք»-ը, իսկ երգչուհի Մ. Պողոսյանը

յանը կատարում է «Կոունկ», «Քելե, քելե» և «Կիլիկիա» երգերը:

Հանդիսության ավարտին տ. Ներսես ծ. վրդ. Պողապալյանը շնորհակալություն է հայտնում հանդեսի բոլոր մասնակիցներին, մանավանդ ԱՄՆ-ից, Մերձավոր Արևելքից Ռյուրաբար ժամանած ներկաներին: Ապա հայր սուրբը գնահատանքի և օրհնության ջերմ խոսք է ուղղում այն տիկնանց, որոնք սիրահոծաբ կերպով պատրաստել են հանդիսության մատաղը:

Սարդարապատի 55-ամյակին նվիրված այս խրախուսիչ հանդիսությունը ավարտվում է հոգևոր հովվի՝ հերոսների հիշատակին արտասանած «Հոգւոց»-ով և խմբովին երգված Տերունական աղոթքով:

ԼՈՒՐԵՐ ԸՈՒՆԱՀԱՅ ԳԱՂՈՒԹԻՑ

Հունահայերի թեմական խորհրդի՝ Մայր Աթոռ ս. Էջմիածնին ուղարկած «Հաղորդագրություն»-ից տեղեկանում ենք, որ վերջերս Աթենքում, Փերիսթերիի ս. Աստվածածին եկեղեցում, տեղի է ունեցել հունահայ համայնքի թեմական (ս. Գրիգոր Լուսավորիչ միություն) ընտրությունները:

Այս կապակցությամբ և մասնավոր Ռուս-վերով Աթենք է ժամանել Ալիստրիայի հայոց հոգևոր հովիվ տ. Մեսրոպ ծ. վրդ. Գրիգորյանը:

Ընտրությունների հաջորդ օրը տ. Մեսրոպ ծ. վարդապետի նախագահությամբ և թեմի հոգևոր հովիվ տ. Հակոբ քհն. Ռյուստեմյանի ներկայությամբ գումարվել է նորընտիր թեմականի առաջին նիստը, ուր և կազմվել է դիվանը՝ հետևյալ անձնակազմով.

Ստեփան Ֆեսճյան՝ ատենապետ.

Սարգիս Խաչատուրյան՝ փոխ-ատենապետ.

Հայկ Ղազարյան՝ ատենադպիր.

Լևոն Քյուսեյան՝ գանձապահ.


Կարայիս Գալայճյան՝ խորհրդական անդամ.

Հակոբ Մերճանյան՝ խորհրդական-անդամ.

Վարդգես Թադեոսյան՝ խորհրդական-անդամ:

Հանուն Ամենայն Հայոց Հայրապետի շնորհավորում ենք հունահայոց թեմի նորընտիր թեմական խորհրդին և մաղթում նրան եկեղեցաշեն գործունեություն՝ ի պայծառություն թեմի եկեղեցական-ազգային և մշակութային կյանքի:





Ա. ՀԱՏԻՏՅԱՆ

ՇՆՈՐՀԱԼԻՆ ՈՐՊԵՍ ՄԱՏԵՆԱԳԻՐ

Շնորհալից 1121—1173 թթ., ավելի քան կես դար, ստեղծագործել է և թողել հարուստ ու բազմաժանր մատենագրական վաստակ, որը հայ ժողովրդի բազմադարյան մշակույթի անմահ հուշարձանն է:

Այդ հիսնամյակը կիլիկյան Հայաստանի պատմության մեջ եկեղեցական, մշակութային, քաղաքական և տնտեսական մեծ իրադարձություններով հարուստ ժամանակաշրջանն է:

Շնորհալից մեր հոգևոր դպրության և երաժշտական երգարվեստի անցված գագաթն է: Նա իր մատենագրական վաստակով հանդիսացավ հայ մշակույթի կիլիկյան առաջին շրջանի մեծ ու վաստակաշատ ներկայացուցիչներից մեկը, համահայկական չափանիշով՝ մեծ մտավորական: «Առանց Ներսես Շնորհալու լուսաշող ներկայության, պիտի մերկանար կիլիկյան ժԲ դարը իր փառքից և պիտի անէանար մի անկրկնելի շողարձակ բարձունք մեր մշակույթի պատմության հորիզոնից: Երանաշնորհ՝ սուրբ Շնորհալին փառավորվել է անցյալում և փառավորվելու է միշտ, իբրև բոլոր ժամանակների պարծանք ամենայն հայոց», գրում է Վեհափառ Հայրապետը իր հոբելյանական կոնդակում՝ նշելով Շնորհալու տեղն ու նշանակությունը հայ մշակույթի «արծաթե դարի» մեծ վաստակավորների շարքում¹:

Շնորհալու մատենագրական բազմաժանր վաստակի մեջ մտնում են կրոնական, եկեղեցագիտական, աստվածաբանական, պատմական, բանաստեղծական, գիտական, մեկնողական, մանկավարժական, քարոզչական, երաժշտական հիանալի գործեր:

Շնորհալու մատենագրական վաստակը համարյա անկորուստ հասել է մեզ:

Շնորհալին բացառիկ և բազմադրույուն մա-

տենագիր է մեր գրականության պատմության մեջ, իր ստեղծագործական արտակարգ ու բարձր կարողություններով, իր ժամանակի երևույթների լայն ընդգրկմամբ և ընկալմամբ:

Շնորհալու ստեղծագործությունն իր դարի և հաջորդ ժամանակաշրջանների մեր մշակույթի պատմության մեջ տիրական է եղել: Նա իշխել է երկար դարեր մեր մշակութային, գրական կյանքի վրա և օրինակ հանդիսացել հետագա դարերի մեր մատենագիրների, բանաստեղծների և երաժիշտների համար:

Շնորհալու մատենագրական վաստակի մասին խոսել են մեր միջնադարյան մատենագիրներից շատերը, այդ թվում՝ Ներսես Լամբրոնացին², Կիրակոս Գանձակեցին³, Ստեփանոս Օրբելյանը⁴ և ուրիշներ:

Շնորհալու մատենագրական վաստակի ուսումնասիրությամբ զբաղվել են Հ. Մ. Չամչյանը⁵, Հ. Գ. Զարրհանալյանը⁶, Հ. Ղ.

¹ «Թուղթ ընդհանրական», ի ս. Էջմիածին, 1885, «Գովեստ ներդրական պատմագրական քանի...», էջ 48:

«Ներսես վիլին» խորոց գիտող,
Եւ խորհրդոց՝ Տևաոց պատմող,
Կտակարանացը՝ թարգմանող,
Ծածուկ քանից՝ քացայալուող,
Հոմերական՝ տաղից չափող,
Ոտանալու տաղից զըսող...»:


² «Պատմութիւն Ռայոց», Երևան, 1981, էջ 118—119:

³ «Պատմութիւն ճահանգի Սիսական», Թիֆլիս, 1910, էջ 138:

⁴ «Պատմութիւն Ռայոց», ի Վեհափառ, հատոր Գ, 1784, էջ 25, 28, 52—55, 62—110:

⁵ «Հայկական հին դպրութեան պատմութիւն» (Դ-ԺԳ դար), Վեհափառ, 1886, էջ 802—822:

¹ «Էջմիածին» ամսագիր, 1978, Ա, էջ 4:



Ալիշանը⁷, Միք. Նալբանդյանը⁸, Մաղ. արքեպ. Օրմանյանը⁹, Մ. Արեղյանը¹⁰, Հր. Ա. ճառյանը¹¹, Նորայր եպս. Պողարյանը¹², Ա. Առաքելյանը¹³, Գր. Հակոբյանը¹⁴, Նիկ. Թահմիզյանը¹⁵ և ուրիշներ:

Ընդունված է Ծնորհալու մատենագրական վաստակը բաժանել երկու մասի.

1. Արձակ և 2. Չափածո:

Ծնորհալին իր գրական գործերը հորինել է ընդհանրապես ուտանավորով և «կաթողիկոսությունն ատաք միջոցին... առույգ հասակի մեջ»¹⁶:

«Արձակ լեզվով գրել է միայն իր պաշտոնի վերաբերյալ գործերը, որոնք ունեն սակայն և՛ գրական, և՛ պատմական մեծ արժեք»¹⁷:

Արձակ գործերի մեջ մտնում են, կաթողիկոս լինելուց առաջ, գրած երեք «Թուղթք միաբանության գրեալ առ յոյնս՝ վասն միությանն եկեղեցւոյ», որոնք են՝ «Գիր խոստովանութեան հաւատոյ Հայաստանեայց եկեղեցւոյ», «Սահմանք հաւատոյ Հայաստանեայց եկեղեցւոյ» և «Յաղագս սանդղութեանց եկեղեցւոյ» նամակները, որոնց մասին խոսվեց մեր նախորդ հոդվածում («Էջմիածին», 1973, Դ, էջ 30—35):

Ծնորհալու արձակ գործերի մեջ, կաթողիկոս ընտրվելուց հետո, առաջինն է

Ատենաբանությունը:

Սա մի հոյակապ ճառ է, որը Ծնորհալին արտասանել է իր կաթողիկոս ընտրություն

⁷ Ծնորհալի և պարագայ իւր», Վեցնտիկ, 1873, էջ 1—588:

⁸ «Երկերի լիակատար ժողովածու», 1848, Երևան, հատոր 2, էջ 37:

⁹ «Ազգապատում», Ա. հատոր, հեյրուր, 1959, էջ 1388—1390, 1402—1410, 1411, 1420, 1488, 1490, 1445:

¹⁰ «Հայոց Ռիմ գրականության պատմություն», գիրք երկրորդ, Երևան, 1946, էջ 78—130, տես նաև Մ. Արեղյան, «Երկեր», Դ, Երևան, 1970, էջ 86—167:

¹¹ «Հայոց անձնանունների քառարան», հատոր Դ, Երևան, 1946, էջ 44—46:

¹² «Հայ գրողներ», Երուսաղեմ, 1971, էջ 289—299:

¹³ «Հայ ժողովրդի մտավոր մշակույթի զարգացման պատմություն», Ա. հտոր., Երևան, 1960, էջ 893—841:

¹⁴ «Ներսես Ծնորհալի», Երևան, 1864, էջ 5—288:

¹⁵ «Ներսես Ծնորհալի, երգահան և երաժիշտ», մասնիկ տակ, Երևան, ս. Մեսրոպ Մաշտոցի անվան Ռիմ ձեռագրերի ինստիտուտի՝ Մատենադարանի հրատարակություն, 1973, 118 մանրագրված էջ, նույնի կիշներով և ծանոթագրություններով:

¹⁶ «Ազգապատում», էջ 1401:

¹⁷ Արեղյան, երկեր, Երևան, 1970, էջ 147:

և ձեռնադրության առթիվ, Ծաղկազարդի օրը, «յաւուր տօնի արմանեմաց», 1186 թվականի ապրիլի 17-ին, Հոռմկլայում գումարված ազգային-եկեղեցական ժողովում. «Տեառն Ներսեսի առ եպիսկոպոսունս և վարդապետս և համօրէն դասս եկեղեցւոյ... առ ձեզ են բանք իմ»¹⁸:

Ատենաբանության մեջ Ծնորհալին նախ խոսում է իր կաթողիկոս եղբոր մասին, հյուսում նրա գովքը, թվում նրա արժանիքները՝ նվաստացնելով և ամբաստանելով իրեն: Գիտակցելով իր նոր ու վեհ պաշտոնի ծանր պարտականությունները, շարունակ համեստությամբ շեշտում է իր անարժանությունը:

Նկատի ունի նաև ժամանակի ծանր դրությունը. «Ջարհուրիմ երկիւղի նայեցեալ լիսն տկարութիւն և ի մեծի այսր աստիճանի բարձրութիւն և ծանրութիւն, մանաւանդ ի չար և յանմասն բարեաց ժամանակիս, որք ոչ միայն յարտաքնոցն, որք հակառակ են հաւատոյս Ենդեալ տագնապիմք ըստ մարմնոյ և աղաւաղին կարգ եկեղեցւոյ, այլև ամուսնք քրիստոնէից»¹⁹:

Դժվարություններից մեծն այն է, ընդունելով Ծնորհալին, որ հայ ժողովուրդը գրկվել է իր հայրենի երկրից, անցյալի փառքից ու պետականությունից և այժմ տարագիր է. «ոչ ի միւս աշխարհի բնակեն, որպէս այլոց ազգաց, զի դիրին էր շրջել առ նոսա առաջնորդացն և սերմանել զբանս այլ ըստ մեղաց մերոց ցրուեալ են ազգ մեր և ժողովուրդք ընդ ոլորտս տիեզերաց ի մէջ օտարասեռ ազանց: Նաև Աթոռս սուրբ դրդուեալ է ի հաստատութենէ ի զանազան և յանպատշաճ վայրս տարբերի ընդ հարկաւ և երկիւղի ալլասեռից և անօգնական և անուէր ի մերասերաց, որում ոչ է կար համարձակ շրջել և ուսուցանել»²⁰:

Դժվարին այս պայմաններում անհնար է շրջել ժողովրդի մեջ, հովվապետական այցելությամբ մխիթարել և առհասարակ շատ ծանր է կատարել հայրապետական գործերը:

Ատենաբանության վերջում Ծնորհալին հույս ու ցանկություն է հայտնում ու աղոթում, որ Աստված կիրկի հայ ժողովուրդը. «Փրկել զմեզ ի քերանդ առիժոց, ազատել զգերեզման ի տանէ կապանաց և դարձուցանել զամենեւեմ յաշխարհն հայրենի... յարուցանել թագաւոր արդար և իշխանս, յիարաւունս Աստուծոյ հաստատեալս»²¹:

Ծնորհալու այս ատենաբանությունը «վսնմ

¹⁸ «Ընդհանրական», էջ 411—428:

¹⁹ Անդ, էջ 421:

²⁰ Անդ, էջ 422:

²¹ Անդ, էջ 426:

է իր պարզությամբ, ազդու է ո՛չ միայն իր արտաքին ձևով, այլ նաև ջերմ հերթիքով, որ բխում է ջերմ սրտից... Մասն ուժեղ է տրամաբանությամբ, մտածության կառավարված և կարգավորյալ ընթացքով»²⁴:

Թուղթ Ընդհանրական.

Շնորհալու արձակ գրվածքների պսակն է նրա Ընդհանրական թուղթը, կամ հայրապետական անդրանիկ կոնդակը, որը գրվել է «Ատենաբանութիւն»-ից երեք ամիս հետո:

«Ընդհանրական»-ը կոչվել է «Ջահ լուսատու աստուածասիրացն մտաց, և աղբիւր շնորհաբոլիս վտակեալ յարբումն ոգւոց նոցին ծարսեաց, պանծալի մատեան... յորում գանձեալ են պատուիրանք աստուածայինք, խրատք հոգեշահք առ համօրէն դասս հոգեւորականաց և ժողովրդականաց և դաւանութիւն ուղղափառ հաւատոյ եկեղեցւոյս մերոյ»²⁵:

«Ընդհանրական»-ը, որպես հայրապետական անդրանիկ կոնդակ, ուղղված է բովանդակ հայության. «Ընդհանուր հաւատաքելոց հայկականացո սեռից, որք յարեւն»՝ ի սեփական աշխարհի Հայաստանեայց բնակեալք, և որք յարևմտեանց կողմանոց սահեալք նժդեհութեամբ, և որք ի միջերկրեայս, ի մէջ այլալեզու ազանց տարաբերեալք, և որք յիրաքանչիւր յեզերս աշխարհի ըստ մեղաց մերոց ցրուեալք ի քաղաքս, ի դղեակս, ի գիւղս, և յազարակս...»²⁶:

«Ընդհանրական»-ը սկսվում է սիրո ողջունով և հայրապետական օրհնությամբ. «Յաստուածընկալ և փրկական սրբոյ Նշանէս... յառաքելական ճշխարացս, և ի սուրբ Լուսաւորչին մերոյ Աջէն և յԱթոռոյս»:

«Ընդհանրական»-ում Շնորհալին նախ հայտնում է իր կաթողիկոս ընտրվելը, կաթողիկոս եղորդ մահը... «Ինքն նաւու հաւատոյ ընդ ծով աշխարհիս՝ հողմով հոգւոյն ուղղակի նաւապետեալ ճշմարտութեամբ և առաքինութեամբ եհաս անվնաս յանքոյթ և յառանց ալեաց նաւահանգիստն, և զմեզ եթող ի տաժանելի և յաղցաւոր կեանս ի մէջ օձից և կարճաց, և զանազան խածուեղ զազանաց... այլն ծանրութեան բեռանց ի ներքոյ՝ հոգևորաց և մարմնաւորաց»²⁷:

Շնորհալին «օձ, կաթին և գազան» է անվանում Հռոմկլան շրջապատող բռնակալներին:

Հայտնելով, թե այսպիսի ծանր պայմաններում «ի բացեալ ինչեւով հովուին և հօտից, յոյժ հեռաւորութեամբ միմեանց», որ-

պես Ամենայն Հայոց կաթողիկոս, ի՛նչ պարտականություններ դրված են իր ուսերին.

«Ի վայրի դալարուց աստուածային օրհնացն հանգուցանել, կենդանարար ջրով հոգւոյն իմաստութեամբ սնուցանել, զգալսն հալածել, զվիրաւորեալսն բժշկել, շրջել առ ամենեւեան՝ ընդ ամենայն կողմանս աշխարհի, քարոզել զհասն Աստուծոյ...», բայց խորապես ցավում է, որ այդ «անկարելի է յաղագրս ժամանակի չարութեան և բազմիշխանութեան... և քաղաք թագաւորական և բազմածուով ո՛չ գոյ ազգի մերում, որպէսզի անդամոր նստելով յԱթոռ հայրապետութեան և վարդապետութեան՝ ուսուցանէք ժողովրդեան մերոյ զաստուածային պատուիրանս, ըստ առաջին հայրապետացն»:

Շնորհալին իր կաթողիկոսության օրերին նդել է նաև նյութական ծանր կացության մեջ. «Այլ ենք իբրև զայժեանմ յորսորդաց և ի շանց փախուցեալք՝ ի քարանձախս բնակելով, յորում ո՛չ և մարմնական հարկաւոր պիտոյիք շատուցեալք ի գիւղից կամ յազարակաց, յորոց ունիմք և ո՛չ մի: Նաև ոչ անդաստան հողոյ... գի վաստակօք և աշխատութեամբ զպէտս մեր լնուաք և ո՛չ օգնութիւն ուստեք որպէս արժան էր, ի թագաւորաց և ի իշխանաց»²⁸:

Արդ, ասում է, չկարենալով անձամբ «շրջել առ ամենեւեան»՝ ընդ յամենայն կողմանս աշխարհի, մտնել զաղթական յորաքանչյուր հայի տունը, կիսել նրա աղն ու հացը, խոսել մեր ազգային-եկեղեցական դժվարությունների մասին, բաժանել մեր հայրենասիրական մտորումները, «ուսուցանել և խրատել... մեք իբրև ի կամաւոր բանտ և կապանաց յայսմ տօթագին քարանձախ արգելեալք՝ գողով ձեռին մերոյ խօսիմք՝ որպէս բերանով ընդ ամենեւեան»²⁹:

Շնորհալու «Ընդհանրական»-ը նորություն է մեր եկեղեցու և մատենագրության պատմության մեջ:

Շնորհալին «պետք էր իր հայրապետության սկզբնավորությունն ալ գրական նշանավոր արտադրությամբ նվիրագործել, և այդ ոգվոյն արդյունքն է Թուղթ Ընդհանրական»-ը, իբրև անդրանիկ կոնդակ օրհնության»³⁰:

«Ընդհանրական»-ը անգնահատելի մի փաստաթուղթ է ժամանակի հայ եկեղեցու, հոգևորականության, հայ ժողովրդի կյանքի մասին, ժամանակաշրջանի բովանդակ հայության կյանքի և բարքերի ընդարձակ ու հյուսկապ պատկերը, հայելին:

²⁴ Աբեղյան, էջ 148:

²⁵ «Ընդհանրական», Ազդ::

²⁶ Անդ, էջ 1:

²⁷ Անդ, էջ 4:

²⁸ Անդ, էջ 7—8:

²⁹ Անդ, էջ 10:

³⁰ «Ազգապատմ», էջ 1402:

Ակզբում այստեղ էլ Շնորհալին խոսում է հայ եկեղեցու ուղղափառ դավանության և մեր եկեղեցական կարգ ու կանոնի և ավանդությունների մասին։ «Ավանդինք պարզ և յայտնի բանի ցուցանել գիտատույ դաւանութեան ճշմարտութիւն»։

Ապա հայրապետական իր խոսքը ուղղում է այդ ժամանակի հայ ժողովրդի կյանքում գոյություն ունեցող բոլոր դասակարգերին, «Առ կրօնատրս», «Առ առաջնորդս սրբոց ուխտից վանականաց», «Առ առաջնորդս եկեղեցւոյ», «Առ դասս քահանայից», «Առ իշխանս», «Առ զհնուորաց դասս», «Առ քաղաքականոյ» (քաղաքի բնակչության), «Առ երկրագործս», «Առ կանանց դասս»²⁹, նրանց տալով իր խրատականը, իր պատգամը՝ նրանց կրօնական և եկեղեցական ու ազգային պարտականությունների մասին։

«Ընդհանրական»-ը՝ Շնորհալու այս մեծ գրությունը, որքան իր բովանդակությամբ շատ կարևոր պատմական փաստաթուղթ է, նույնքան և արժեքավոր մի գրական երկ է։ Իրրև բանաստեղծի գործ՝ դա բնականաբար հորինված է գեղեցիկ ձևով, հեղինակին հատուկ հաճելի ոճով։ Մարդ այդ կարդալով, երբեմն հրապուրվում է նրա կարգավորյալ ու թեթև, միաժամանակ և հաճախ պատկերավոր մտածությունը։ Շնորհալին միտքն արտահայտում է սովորաբար կարճ ասացվածքներով, հստակ ու սրտալի խոսքերով, խուսափելով քառերի և քերականական ձևերի կրկնությունից։

Չի մոռանում իր աստիճանին պատշաճ խրատական եղանակը, գրուցում է մեղմ, հանդարտ ու ծանր, ո՛չ հրամայողաբար, ո՛չ ինքնագով մեծամտությամբ, այլ համեստաբար։ Ոչ մի շինծու խոսք չկա³⁰։

«Ընդհանրականը հրատարակության օրեն մինչև մեր օրերը, ութ դարերու ընթացքին մեջ, քան մը կորսնցուցած չէ իր գործիքենն և ազդեցութենն և աբօր ալ տակալին լավագույն և ընտրելագույն ձեռնարկն է եկեղեցական կանոնաց և եկեղեցական քարեկարգության լավագույն ուղեցույցն է»³¹։

Շնորհալու մատենագրական վաստակի արձակ էջերի մեջ կարևոր տեղ են գրավում նաև նրա թղթերը, որոնց մեջ «կան նաև մասնավոր, անձնական բովանդակություն ունեցողներ, բայց այդ գրությունները մեծ մասամբ վերաբերում են դավանական և այլ կրօնական խնդիրների, որոնցով հետաքրքրվել են ժամանակակիցները»³²։

Շնորհալու դավանաբանական թղթերի կամ մամականու մեջ կարևոր են «Առ Մանուէլ թագաւոր Հոռոմոց» գրած Ա, Բ, Գ թղթերը³³, «Թուղթ առ Միքայել պատրիարք Հոռոմոց»³⁴։

Շնորհալին ունի նաև շատ ուրիշ թղթեր ևս³⁵, որոնցից մասնավոր նշանակություն ունեն նրա արևելյան վարդապետների գրած թղթերը³⁶։ Շնորհալին «Մերքին և մտերմական հարաբերություններ կպահեր արևելյան վարդապետներուն հետ և զանոնք կհարգեր և կգնահատեր»³⁷։ Շնորհալին արևելյան վարդապետների խնդրանքով և առաջարկով թարգմանել է ս. Սարգսի վկայաբանությունը, Դավիթ Անհաղթի նշանավոր «Բարձրացուցէք» ճառի և Գրիգոր Նյուսացու «Ամենայն չար» ճառերի մեկնությունը³⁸։

Գեղեցիկ են և հետաքրքրակալն նաև Շնորհալու «Ի Սամոստիա քաղաք յաղագս արևորդաց դարձի»³⁹ և համաճարակի վրտանգին ենթարկված եղեսացիներին գրած մամակները⁴⁰։ Շնորհալին ունի նաև «չափածո թղթեր» («Բանք Չափաւ», Վենետիկ, 1828, էջ 325—334)։

Շնորհալու սույն մամակները «իբրև պատմական փաստաթղթեր կարևոր են գլխավորապես հայոց եկեղեցու պատմության համար, բայց երբեմն էլ ձևով քարճարանում են և ստանում գրական արժեք իբրև պերճախոսություն։ Այդպիսիներն աչքի են ընկնում իրենց գորեղ տրամաբանությամբ, քերված գեղեցիկ օրինակներով և զանազան ճարտասանական ձևերի գործածությամբ, ուժեղ հակաճառությամբ և առարկությամբ, մի քանի դեպքում նաև ծաղրով ու հեզնությամբ»⁴¹։

Շնորհալու արձակ գործերի մեջ պետք է նշել նաև Մատթեոսի Ավետարանի մեկնությունը, որը հասցրել է մինչև Ե գլուխ, 17 հատարը։ «Մի համարիք եթե եկի լուծանել։ Շնորհալին Մատթեոսի Ավետարանի սույն մեկնությանը ձեռնարկել է իր կաթողիկոս եղբոր հանձնարարությամբ։ Հայտնի չէ, թե «վասն ի՞նչ պատճառի խափանեալ եղև»։ Հովհաննես Երզնկացին (Ծործորեցին, ԺԳ դար), որը շարունակել է Շնորհալու մեկնությունը, գրում է. «Գիտապատիւ և

²⁹ «Ընդհանրական», էջ 145—148, 189—198, 198—212, 218—221։

³⁰ Անդ, էջ 222—228։

³¹ Անդ, էջ 285—300, 318—331։

³² Անդ, էջ 300—308։

³³ «Ազգապատում», էջ 1438։

³⁴ Անդ, էջ 1438։

³⁵ «Ընդհանրական», էջ 308—318։

³⁶ Անդ, էջ 318—331։

³⁷ Արեղյան, էջ 158։

²⁸ «Ընդհանրական», էջ 23—112։

²⁹ Մ. Արեղյան, էջ 158։

³⁰ «Ազգապատում», էջ 1408, 1409։

³¹ Արեղյան, էջ 158։

քարեհույսակ հայրն մեր ըստ հոգոյ, և երկրորդ Լուսաւորիչն սուրբ եկեղեցւոյ, ի գարնէ և ի շնորհէ սրբոյն Գրիգորի վալլեալ, կորովամիտ և համեստաբան կաթողիկոսն հայոց տէր Ներսէս Կլայեցի, աշխատեալ վերլուծութեամբ ի սկիզբն սրբոյ Լուսաւորացիս գեղեցիկ և հանճարեղ բանի, և դաշարեալ վարդապետութիւն նորա ի մուտս վարդապետութեան Փրկչին յայսմ վայրի, ոչ գիտելով եթէ ո՞րոյ ւսղագաւ եղև խափանեալ» կամ «ընդէ՛ր եղև թերի մնացեալ աստուածային գործոյս այսորիկ գործառնութիւն»⁴²:

Ծնորհալու թարգմանություններից հիշենք «Վարք ս. Պարսամայ», «Ներբողեան Յովհաննու Ոսկեբերանի ի սուրբն Գրիգոր Լուսաւորիչն հայոց», «Վարք Տարագրոսի և Պրորոսի»⁴³ և այլն:

Ծնորհալին թողել է նաև չափածո մեծաբծեք և հարուստ գրական ժառանգություն:

«Հոմերական տաղից չափօղ,
Ուսանաւոր տաղից գրտօղ,
Ի հոգևորսըն զնոյն տուօղ,
Որով ըզսիրտս կարծր ճըմլօղ»⁴⁴:

«Իբրև պատմական պարագա պետք է հիշենք Ներսեսի վրա երևցած բանաստեղծության և երաժշտության ծիրքերը, զորս առատորեն գործածեց եկեղեցական արարողությունները հարստացնելու և բարեկարգելու համար»⁴⁵:

Ծնորհալին չափածո երկերում «հետևելով իր շնորհքին ու հայացքին ուսանավորի վրա, մշակել է հայոց լեզվի տաղաչափությունը, որով նա ազդել է իր ժամանակակիցների վրա: Որչափ բազմազան են Ներսեսի Ծնորհալու բանեցրած տաղաչափական ձևերը, նույնչափ աչքի է ընկնում նրա ստեղծագործությունը նաև իր այլ և այլ գրական տեսակետներով»⁴⁶:

Ծնորհալու բանաստեղծական վաստակը «արտահայտությունն է իր ժամանակի ոգու» (Մ. Արեղյան): Այդ ստեղծագործության առաջինն է

Վիպասանութիւնը:

Ծնորհալու բանաստեղծական չափածո վաստակի երախայրիքն է սույն մեծ քերականը՝ գրված 1121 թվականին, 21 տարեկան հասակում: Քերականի ընդհանուր վերնագիրն է՝ «Շարադրութիւն Հոմերական վիպասանութեամբ սակս Հայկազանցն սեռի և

Արշակունեացն զարմի ի սկզբանց միմչև ի վախճան, առասացեալ Ներսեսի եղբոր կաթողիկոսի հայոց ինրական նախնիս ի համբակութեան ելով տիս»⁴⁷:

«Վիպասանութիւն»-ը բաղկանում է 1600 տողերից, և «մեր գրականության առաջին մեծ պատմական քերականն է» (Մ. Արեղյան), որի մեջ Խորենացու օրինակով Ծնորհալին պատմում է հայկազն, արշակունի, բագրատունի տոհմերի մասին, ապա երկարորեն կանգ է առնում ս. Գրիգոր Լուսավորչի և մանավանդ Պահլավունի իշխանների և կաթողիկոսների՝ Գրիգոր Մագիստրոսի, Գրիգոր Վկայասերի, Բարսեղ Անեցու, Գրիգոր Գ Պահլավունու, իր տոհմի, հոր, եղբայրների և իրեն վրա:

«Վիպասանութիւն»-ը գրվել է երախտագիտական խորը զգացմունքներով դեպի նախնիները, հայրենասիրական ջերմ շնչով և ատելությամբ դեպի հայ ժողովրդի թշնամիները՝ հույները, կաթոլիկները, տաճիկները, մամուլները:

Ծնորհալին իր քերականում ցույց է տվել, որ հայոց նախահայրերը՝ «արմենները, քաջ, հաղթող և, միաժամանակ, ազնիվ ու հայրենասեր մարդիկ են եղել: Նրանք սիրել են ազատությունը և խիստ ծառայել բոնության և անարդարության դեմ»⁴⁸: Այսպես նա ջերմ հայրենասիրությամբ խոսում է մեր հայկազան, արշակունի, բագրատունի, պահլավունի տոհմերի մարդկանց արիության և ազգօգուտ գործերի մասին:

Ծնորհալին «Վիպասանութիւն» քերականում մեծ հիացմունքով է խոսում նաև մեր եկեղեցու նշանավոր հայրերի՝ ս. Լուսավորչի, Մեծն Ներսեսի, ս. Սահակի, ս. Մեսրոպի, Գրիգոր Վկայասերի, Բարսեղ Ա Անեցու, Գրիգոր Գ Պահլավունու մասին, որոնք նույնպես նշանավոր են եղել իրենց եկեղեցացիներ ու հայրենաշեն գործունեությամբ: Սրտառույչ ու հայրենասիրական տողերով է նկարագրված Վարդանանց պատերազմը, Ղևոնդյանց քահանաների արիությունը:

Յիսուս որդի:

Ծնորհալու բանաստեղծական տաղանդի գլուխ-գործոցն է «Յիսուս որդի» 4000 տողից և երեք գրքերից բաղկացած մեծ քերականը՝ գրված 1152 թվականին, որի մեջ լայն չափով դրսևորվում է Ծնորհալու մտքի և երևակայության թռիչքը, նրա տաղանդն ու անհատականությունը: «Իսկական մի բանաստեղծական գործ» (Մ. Արեղյան):

Քերականի բուն վերնագիրն է. «Տեառն

⁴² «Հայ գրողներ», էջ 381—382:

⁴³ ԱՌդ, էջ 236—237:

⁴⁴ «Ընդհանրական», էջ 408:

⁴⁵ «Այգասպատում», էջ 1401:

⁴⁶ Արեղյան, էջ 108, 108—111, տես նաև «Հայ գրողներ», էջ 235:

⁴⁷ Ներսես Ծնորհալի, «Բանք չավառ», Վեճևտիկ, 1830, էջ 408:

⁴⁸ Գր. Հակոբյան, «Ներսես Ծնորհալի», էջ 174:

հերքեսի նուէր մաղթանաց... Գեր-
շափական տաղիս տուողի բանից, ըղձում
անթոյից Գերաճնական հոգաք... զարթոցե-
լոց մուօք ի թմբորութենէ կրից յիշատակա-
անցելումն իրի Գերկայի և ապագայի, ող-
բումն հեծութեան արտի, խօսք ընդ Աստու-
ծոյ»⁴⁹:

Մեր մատենագրության երկրորդ նարեկն
է, որովհետեւ «Յիսուս որդի»-ն կոչվում է
նաև Ողբերգութիւն վիպասանական ի տա-
րից սրբոց:

«Յիսուս որդի»-ն, որը երեք գրքերից է
բաղկանում, Հին և Նոր կտակարանի պատ-
մության բանաստեղծական վերարտադրու-
թյունն է, ընդելուզված եկեղեցական պատ-
մության դրվագումներով: Քերթվածը ա-
վարտվում է Քրիստոսի երկրորդ գալուտյան,
վերջին դատաստանի և աշխարհի վախճա-
նի դանթեական նկարագրությամբ:

Ըստ Արեղյանի բնութագրության, «Յի-
սուս որդի»-ն «քովանդակում է մարդկության
պատմության անցյալը, Գերկան և ապա-
գան... քնարական մի քերթված... կամ, ինչ-
պես հեղինակն է բնորոշել, «ողբերգութիւն
վիպասանական», մի կողմով պատմվածք է,
մյուս կողմով՝ մի սրտաթուխ երգ: Եվ այս
կողմից արդեն նա մտնել է Գրիգոր Նարե-
կացուն: Այս նմանություններով հանդերձ,
նա հորինել է մի օրիգինալ-իսկատիպ, յու-
րաստեղծ ընտիր երկ, որի մեջ անձնական
իդիզմը բոցում է կարևոր տեղ»⁵⁰:

«Յիսուս որդի»-ն «խօսք է ընդ Աստու-
ծոյ», բազմազան աղոթքների մի շարք, ո-
րոնց յուրաքանչյուրի մեջ երևան է գալիս
մեծ երգողի և աղոթողի՝ Շնորհալու զգա-
ցումների մի գիծը, հոգեկան վիճակի մի
կողմը:

Մեծ գրականագետը, համեմատելով Նա-
րեկացու «Մատենան ողբերգութեան» և Շնոր-
հալու «Յիսուս որդի» քերթվածի արտա-
հայտչական, ռեական զանազանությունը,
գրում է.

«Շնորհալու այս բանաստեղծության մեջ
ողբերգը մեղմ է, տխուր ու քնքուշ. ամեն
ինչ հանդարտ է ու փափուկ: Ոչ վերամբարձ
սլացք ու թոխչք, ոչ սրտի այրուք ու ճնճնե-
րում և ոչ տոշորոշ ու կրակոտ զղում: Այս-
տեղ չենք գտնում հուսահատական ճիչ ու
աղաղակ, որով ինքն իրեն կտրատում և ո-
չընչացնում է Գրիգոր Նարեկացին ողբա-
լիս: Ներսես Շնորհալու մոտ ևս զգացումնե-
րի զեղումն անկեղծ է, մեծ է կրոնական
զղջման եռանդը, բայց, ինչպես սովորաբար,
նա չափավորության սահմանից չի անցնում:

Երկուսի մեջ ևս կատարելապես նույն զգա-
ցումներն են, միայն արտահայտության թա-
փով ու ձևով տարբեր: Բայց Շնորհալին
նման է մի քարեկիրի մարդու, որ իրեն պա-
հել գիտե, միմյնեռ Նարեկացին հիշեցնում է
մի քնական մարդ, որի Գերքինն անգուսպ է
և որ անմիջականորեն, առանց քաշվելու
արտահայտում է իր բոցկումները և հեկեկա-
յով արտասվում: Նա համեմատվում է մի
պղտոր հեղեղի, որ գրդանք տալով՝ ալիք-ա-
լիք ետևից քշում է առաջ, և որի մեջն ընկ-
նողը տանջալից տարվում է երկար-երկար,
առանց հասնելու եզրին. միմյնեռ Շնորհա-
լին նման է մի ակնակիտ, վճիտ աղբերա-
կի, որ հանդարտ սահում է կարկաչելով, և
որի խաղաղ ափին նստած՝ մարդ սուզվում
է խորհրդածության մեջ աշխարհիս մասին:
Բայց այսպիսի զանազանությամբ հանդերձ՝
Շնորհալու այս երկը պակաս ազդու չէ, քան
Նարեկացուն. դա մի հեծություն, մի հա-
ռաչ է, մեղմ ու հեզիկ, և ոչ հեծկտանք ու
թառանչ, բուռն ու սաստիկ:

Ինչի՞ց է առաջացել երկուսի այս ռեական
զանազանությունը:—Անշուշտ, երկու բա-
նաստեղծների խառնվածքի, բնավորության
տարբերությունից. մեկինը տաք ու բոցկող,
մյուսինը՝ անուշ ու հանգիստ» (Մ. Արեղ-
յան):

Շնորհալին այս երկի մեջ ունի մեծվայե-
լույն հատվածներ վերջին դատաստանի նկա-
րագրի մեջ: «Շնորհալին «Յիսուս որդի» իր
ողբերգության մեջ հանդիսանում է մեր երկ-
րորդ և վերջին մշակավոր եկեղեցական բա-
նաստեղծը, իբրև արտահայտիչը իսկական
բարեպաշտ կրոնավորական, ներանձնական
վանականության»⁵¹:

Շնորհալին իր «Յիսուս որդի» մեծ քերթ-
վածը «համարում է համամարդկային սե-
փականություն, որը գրված է բոլորի համար
և որպես հավիտեանական մի կոթող, միշտ
պիտի ընթերցվի և դրա հետ հիշվի իր ա-
նունը (Գր. Հակոբյան):

«Միշտ յիշատակ սա եղիցի

Այժմ և յաւուրն ապագայի...

Նաև հանուրք ամենայնի

Մերձակայից և ոյք հեռի»⁵²:

«Յիսուս որդի»-ն եղել է մեր ժողովրդի
համար ընթերցանության ամենատարածված
գիրքը: Այն ունեցել է բազում տպագրու-
թյուններ: Առաջին անգամ տպագրվել է
1565 թվականին⁵³:

⁴⁹ Աճ, էջ 124—127:

⁵⁰ «Բանլի չափա», էջ 106:

⁵¹ «Հայ հեռախոս գրքի մատենագիտական ցանկ»,
(1512—1800), Երևան, 1963, էջ 6, 18, 17, 18, 31 և
այլն:

⁴⁸ «Հանք չափա», էջ 7—100:

⁵⁰ Արեղյան, էջ 123:

Ողբ Եղեսիոյ.

Շնորհալու չափածո հայրենասիրական ստեղծագործության գլուխ-գործոցն է «Ողբ Եղեսիոյ»-ն, իր «իսկական բանաստեղծական հղացմամբ և արվեստով» և հայրենասիրական, քնարական շնչով: Սույն մեծ քերթվածի նյութը և եղելությունները պատմական են, ինչպես ինքն է նշում.

«Քանզի բանի զիրս եղելոց,
Մեր ժամանակնս դիպելոց»⁵⁴:

«Ողբ Եղեսիոյ»-ն քաղկանում է 2096 տողից: Ամբողջ քերթվածը 4 մաս է. մալսերգանք, Եղեսիայի պաշարումն ու կոտորածը, անեծքները և Շնորհալու հույսերը զավիքի նկատմամբ:

Շնորհալին նորարար էր նաև հայ միջնադարյան, հայրենասիրական քնարագության մեջ, այսինքն՝ «ժամանակակից քաղաքական դեպքերի վրա բանաստեղծություն հորինելու մեջ: Բայց միանգամայն այդ երկն իր մեջ լայնորեն անդրադարձած ունի հեղինակին ժամանակակից իրականությունը, հասարակական և ազգային իրական կյանքի պատկերը, ինչ է հայրենասիրական ոգեվորությամբ, հարուստ և փայլուն նկարագիրներով, լինի խաղաղ և բարձր կյանքի, բնության ու շեն քաղաքների, թե քաջամարտիկ կոփվների, որ քրիստոնյաներն ինքնապաշտպանության համար մղում են պալազդիների դեմ, և թե վերջիններիս գործած վայրագությունների: Եվ այս ամենի վրա ընդարձակ ծավալով սփռված են հեղինակի հույզերն ու խոհերը, նրա գգայուն սրտի մորմոքն ու կսկիծը, նրա հույսերն ու տենչերը, որ միայն իրենց չեն, այլ նաև իր ժամանակի քրիստոնեությանն ընդհանրապես և հատկապես մասնավորապես»⁵⁵:

Այս քերթվածի գործողության հիմքը կազմող պատմական դեպքը Եղեսիա քաղաքի պաշարումն ու գրավումն է Հալեպի Զանգի ամիրայի կողմից:

Եղեսիայում ԺԲ դարում ապրում էր շուրջ 90 հազար հայ բնակչություն: Քաղաքը պատկանում էր ժուխին անունով կաթոլիկ իշխանի, որը երբեք չէր հետաքրքրվում քաղաքի պաշտպանության հարցով:

Ակսվում է պաշարումը, քաղաքի ազգաբնակչությունը մակաբայեցիների և վարդանանց հայրենասիրությամբ կռվում են. նույնիսկ եպիսկոպոսներն ու հոգևորականները

մեկ ամիս քաջությամբ ու հերոսությամբ պաշտպանում են հայրենական քաղաքը.

«Անդդդուելի կալ ի մարտին,
Արիաբար ընդդէմ չարին»:

Սակայն ի վերջո քաղաքը ընկնում է թշնամու ձեռքը, ավերվում, թալանվում և բնակչությունը գերեվարվում:

Եղեսիայի անկումը մեծ վիշտ է պատճառում կիլիկիայի հայությանը:

Շնորհալու Շահան եղբոր որդին՝ Ապիրատ իշխանը, պաշարման ժամանակ եղել է Եղեսիայում և, ազատվելով, եկել է Ծովք և պատմել այդ բոլորի մասին Շնորհալուն:

Շնորհալին ահա այդ դեպքի տպավորության տակ և Ապիրատի խնդրանքով հյուսել է իր ողբը, 1145 թվականին:

Սույն ողբը դիմաոնություն է, այսինքն Եղեսիան առնված է դիմաոնաբար, քաղաքը հանդես է գալիս իբրև որդեկորույս որդի և այրի կին, որ նախ խոսում է իր փառավոր անցյալի մասին և ապա ավերակների վրա նստած ողբում իր գլխին եկած մեծ աղետը և հրավիրում համայն քրիստոնյա աշխարհը՝ նրբաստեմը, Կ. Պոլիսը, Հոռոմը, Ալեքսանդրիան, Անտիոքը, ողբակից լինել իրեն: Այս հանգամանքը «այնպիսի մի գյուտ է, որ ամբողջ երկին տալիս է մեծ կենդանություն (Մ. Արքեպիսկոպոս)»:

«Ողբացէ՛ք, եկեղեցի՛ք,
Հարսունք վերին առագաստի,
Քո՛րք և եղբա՛րք իմ սիրելի...
Ա՛զգք և ազի՛ցք որ էք յերկրի,
Հաւատացեալք Քրիստոսի,
Ի երկրպագուք նորին խաչի...»:

Եղեսիան ապա իր խոսքը ուղղում է Մեծ Հայքին, Վաղարշապատ և Անի մայրաքաղաքներին, հայ եկեղեցուն և պատմում իր անցյալի փառավոր վիճակը և ողբում կրած դժբախտությունը.

«Եւ արդ առ քեզ՝ բանի բերին
Հայաստանեայց եկեղեցի,
Յորում կաթեաց շողն երկնային...»:

Այս հանգամանքը առիթ է հանդիսանում Շնորհալուն ոգեկոչելու քաղաքի փառավոր անցյալը և ողբալու ոչ միայն Եղեսիայի՝ հայկական այդ ուստանի տխուր բախտը, այլև ողջ Հայաստանի իրականությունը, իր կիր, որը մոխրակույտի է վերածվել արարների, սելջուկների արշավանքներով:

«Քանզի երբեմն և դու էիր
Վայելչական հարսն ի քօղի,
Մերձաւորաց յոյժ ցանկալի,
Հեռաւորաց փափաքելի»:

⁵⁴ Ներսէս Շնորհալի, «Ողբ Եղեսիոյ», Երևան, 1968, էջ 104:

⁵⁵ Արիւսյան, էջ 128:

Շնորհալիմ որպես անկեղծ ու ճշմարիտ հայրենասեր, հոգեկան ծանր վիշտ է ապրում Եղևսիա քաղաքի գլխին պայթած դժբախտությունների առիթով:

«Որ աստամօր սիրտ իմ ճըմլի,
Ի երկկամուճքս գալարի...
Ցաւ հարկանի որովայնիս,
Միտք և հոգիս իմ այլայլիմ...
Մինչդեռ յիշեմ զօրն անագին,
Եւ զստատեղն մթազին»:

Շնորհալու սույն «Ողբ»-ը չափածո է, հանգավոր, սրտահույզ քնարերգություն է: Բանաստեղծը մերթ սրտի կսկծից բուռն ճիշեր է արձակում թշնամիների դեմ, մերթ մեղմ և անուշ, բայց խորին տրտմությամբ լցված, հառաչում է Հայաստանի համար, որոնում է նրա անցած հին փառքը, որ այլևս չկա:

Ամբողջի մեջ տեսնում ենք մի անկեղծ կարոտալի վիշտ ու թախիծ վաղուց հեռացած ու կորած քաղաքական ազատության համար, տենչանք՝ ունենալու այն հին երկիրը, որ էր «նման փթեռնալ ծաղկի... պայծառացած ի գոյն վարդի», երանելի և ցանկալի ամենքի համար, մի երկիր, որ վայելում էր ուրախ կյանք, երգ ու երաժշտություն, ամենալից սեղաններ, բարեկամական զվարճություններ: Ո՛ր է այն ամենը, հարցնում է բանաստեղծը՝ դիմելով Հայոց աշխարհին»⁵⁶:

Վաղարշապատն ու Անին Շնորհալու գրչի տակ դառնում են Հայաստանի անցյալ մեծության և փառքի խորհրդանշանները:

Շնորհալու այս ողբը՝ «հեղինակի ժամանակակից կյանքի երգը, միաժամանակ և մեր ժողովրդի և երկրի դարավոր վերքերի առաջին բանաստեղծական ողբն է, «հայրենասերի ողբը», առաջին «վերք Հայաստանին» (Մ. Արեղյան):

Բայց, ըստ Շնորհալու, հայոց վիշտը ավելի մեծ է, քան աշխարհի բոլոր վշտերը: Ողբի հիմնական և սևեռուն գաղափարը Հայաստանի անկախության կորուստն է և նրան ազատագրված տեսնելու պայծառ երազն ու հավատքը: Շնորհալու ողբը ապա դառնում է աշխարհաճավալ, համամարդկային, համաքրիստոնեական ողբ և վիշտ՝ «քրիստոնյա և մահմեդական ժողովուրդների, քրիստոնեության և Իսլամի հակադրությամբ»:

Այս է կազմում քերթվածի գաղափարական բովանդակությունը. Ավետարանի և Հուրանի հակադրություն և «հայրենասիրական ողբերգություն»՝ այլազգերից կրած սկզբնունքի հիման վրա»:

Ողբը ավարտվում է հայ ժողովրդի և Հայաստանի ազատագրության վարդագույն երուզանքներով, ապագայի ցկատմամբ խորր հավատքով և քաղաքական լավատեսությամբ:

«Արդ, լո՛ւր և գոս փրտեալ գերան,
Մերձ ի յանկուսնքն կործանման...
Վասն այսորիկ Աստուած իսպառ
Կործանեսցէ զքեզ յաիտեան
Եւ խլեսցէ զարմատըս քո...
Եւ հատուցի քեզ փոխարէն...
Որդիք ձեր որբ, կանայք գերեալ
Լիցին մուրդը և տատանեալ...»:

Իսկ հայ ժողովուրդը՝ «Որպէս ծաղիկ բուրբոցած և սաղարթագեղ զարդարված»,

«Գան ժողովին յամէն կողմանց
Ուր հալածեալ են և ցրուած...
Յայն ժամ որդիքդ իմ հեռացած,
Որ այժմ յիցէն էք բաժանուած,
Գայք ի վերայ բարձեալ կառաց,
Պալարակապ երիվարաց,
Չորեք ծագեան տիեզերաց...
Ի գաւառաց հեթանոսաց,
Եւ յաշխարհաց Պարսից, Թուրքաց»:

Հայրենիքում հավաքվում է պանդուխտ հայությունը,

«Ձձեզ տեսանիմ շուրջ ժողոված...
Ընդ որ խնդամ և ցնծացած,
Գիրկս արկանէմ զուսրճացած
Եւ տրխրական զգեստ մերկացայց
Կարմիր կանաչ գոյն զգեցայց...
Եւ զպատմութեանս պատմած
Փոխեցիցն նորոգ կարած...»:

Շնորհալու ողբը իր գաղափարական և գեղարվեստական բարձր մակարդակով, իր ջերմ հայրենասիրությամբ մեծ տեղ է գրավում ոչ միայն մեր գրականության, այլ նաև միջնադարյան համաշխարհային գրականության մեջ:

Շնորհալու չափածո գործերից է նաև «Բան հաւատոյ, քառանգոր տաղի չափոյ»⁵⁷ մեծ քերթվածը:

Կրոնական-դավանաբանական բովանդակություն ունեցող սույն քերթվածը, որը թաղկանում է 1500 տողերից, գրվել է Հռոմկլայի հայրապետանցում, 1151 թվականին, Շնորհալու կրտսեր եղբոր՝ Ծահանի Ապիրատ որդու խնդրանքով: Սույն Ապիրատ իշխանն ապա կաթողիկոս եղավ Գրիգոր Զ Ապիրատ անունով (1194—1203):

«Բան հաւատոյ» քերթվածը Շնորհալին գրել է հայ եկեղեցու դավանությունը պաշտ-

⁵⁶ Աղղ, Լջ 131:

⁵⁷ «Բանք չափա», Բ տպագր., Վեհապետիկ, 1928, Լջ 182—238:

սլանելու և քաղկեդոնականությունը հերքելու նպատակով, ինչպես նա նշում է քերթվածի «Յիշատակարան երգողին» բաժնում.

«Ի սմա գրեցի գրանս հաւատոյ,
Փոքր բանի կարն ի կարնոյ,
Միայն ըզմիտսըն ցուցելոյ,
Ընթերցողաց վերծանելոյ,
Արագ մշտուցրն հասելոյ,
Հակառակայ պարսնանելոյ,
Եւ ճշմարիտ հաստատելոյ,
Մանկանց սրբոյ եկեղեցոյ»⁶³:

«Բան հաւատոյ»-ն հետագա դարերում մեր դավանաբանների ձեռքում եղել է գաղափարական գեներ, նրանց հակաքաղկեդոնական պայքարում, ինչպես նշում է Շնորհալու անանուն բնագիրը. «Առնէր և խոստովանական դաւանութիւնս սրբաբան աստուածութեանց... ըստ ողղափառ դաւանութեան սուրբ հարցն»⁶⁴ նույն տաղաչափութեամբ, յոյժ ընդունելի և հաւանական ընդհանուր եկեղեցեաց ողղափառաց և իմաստասիր բնուողացն»⁶⁵:

Շնորհալու չափածո գրվածքների մեջ մասնավոր տեղ է գրավում նրա հոգեբույս աղբյուրը, թեև գրված է արձակ, բայց ապրումների, հույզերի հարստությամբ և ներքին տիրմամբ սքանչելի ու ազատ մի բնաբերգություն է: Այս նշանավոր աղոթքը կոչվում է «Հաւատով խոստովանիմ» կամ «Աղոթք իւրաքանչիւրոց անձանց հաւատացելոց ի հերիստոս»⁶⁶:

«Շնորհալիի քարեպաշտական իղձերուն ճշգրիտ պատկերը կկարդանք Հաւատով խոստովանիմ անգուգական աղոթքին մեջ, որ ճշմարիտ, ողղափառ հավատացյալի զգացմանց իսկատիպ նկարագիրն է և շատ խորհրդավոր գործ մը կատարած են անոնք, որ 36 լեզուներու թարգմանելով բոլոր քրիս-

տոնյա աշխարհին ծանոթացուցին այդ սքանչելի աղոթքը»⁶⁷:

Շնորհալին գրել է նաև մի մեծ քերթված, իր ժամանակի մեծ գիտնական, աստվագետ ու իր քարեկամ Մխիթար Հերացի բժշկական խնդրանքով: Այդ քերթվածը կոչվում է «Յաղագս երկնից և զարդոց նորա բառանաբար ի դիմաց նորին ի չափ երկուսասանիցն պարզեալ ոտից»⁶⁸:

«Շնորհալու գործերից շատերը իրենց թեմայով և էությունը նորությունն էին ժամանակի գեղարվեստական գրականության մեջ: Սրանց մեջ որպես գրական նոր տեսակ հետաքրքրական է «Յաղագս երկնի և զարդոց նորա» տիեզերագիտական պոեմը»⁶⁹:

Սույն քերթվածը գրվել է Հոռմկլայում, 1160 թվականին: Այն բաղկանում է 200 տողից: Գրվածքի վերջում կա մի «Յորդորակ»⁷⁰ տողից բաղկացած. «Ամեն տան (երկտողի) սկզբի տառերը կազմում են այս զբոսանքը. «Մխիթար բժիշկ, ընկալ ի ներսեւ զայս բան»⁷¹:

Շնորհալու չափածո գրական վաստակի մեջ մտնում են նաև ներբողյաններ «Աղոթ խաչի», «Առ սուրբ հրեշտական», խրատներ «Բանք ներբողական ի խրատ ոգոց համայնից ի դիմաց մերոյին տառից տանց լուրաքանչիւրն քառից», առակներ (հանելուկ իմաստով) «Տեսուն Ներսէսի ասացեալ է Զարակըս, վասն ուրախութեան մարդկան»⁷²:


Շնորհալու գրած շարականները, տառերն ու զանձները ուսումնասիրության նյութ կը դառնան մեր մաջորի՝ երրորդ հոդվածի համար:

⁶³ Աճղ, էջ 248:
⁶⁴ «Մխիթար հայկական», ԺԴ, էջ 38—40:
⁶⁵ «Երանգիրք մայրոց, ս. Եկեղեցոյ», Վաղարշապատ, 1902, էջ 505—510:

⁶⁶ Աճղ, էջ 6:
⁶⁷ Մխիթար, էջ 116:
⁶⁸ «Բանք չափաւ», Վննետիկ, 1828, էջ 248—285, 251—384, 690—698:

⁶⁹ Աճղ, էջ 6:
⁷⁰ Մխիթար, էջ 116:
⁷¹ «Բանք չափաւ», Վննետիկ, 1828, էջ 248—285, 251—384, 690—698:

⁷² «Բանք չափաւ», Վննետիկ, 1828, էջ 248—285, 251—384, 690—698:





ՍՈՒՐԵՆ Ե. ԲՈՒԱՆՋՅԱՆ

ԱՐՏԱԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍՄԲԱՏՅԱՆՅԸ ԵՎ ՆՐԱ՝ ՄԱՅՐ ԱԹՈՒԻ ՏՊԱՐԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ԳՐԱԾ ԵՐԿԸ

Վերջերս Մայր Աթոռի տպարանից, որպես «Էջմիածին» ամսագրի առանձնատիպ, լույս տեսավ Արտակ եպս. Սմբատյանցի «Սուրբ Էջմիածնի միաբանության գրական-կրթական գործունեությունը և Մայր Աթոռի տպարանը» աշխատությունը:

Հրատարակված սույն արժեքավոր աշխատության հեղինակ, Մայր Աթոռի միաբան Արտակ եպիսկոպոս Սմբատյանցի (Տավուշեցի) քովանդակ կյանքը եղել է հայ եկեղեցուն և հայ ժողովրդին մինչև վերջ առանց մնացորդի նվիրվելու բացառիկ մի օրինակ: Իր կյանքի ընթացքում ուր որ էլ նա գործել է, արժանի կերպով վայելել է հայ հասարակության անվերապահ սերն ու համակրանքը և համարվել մեր շնորհաշատ և եռանդուն հոգևոր-հասարակական գործիչներից մեկը: Պետք է նշել, որ ցարդ տալ-գիր գրականության մեջ շատ քիչ բան է հայտնի Արտակ եպիսկոպոս Սմբատյանցի մասին, ուստի մեր խոսքը ևս նվիրված մեր կյանքին ու գործունեությանը շատ թերի էր լինելու, եթե երկար որոնումներից հետո վերջերս մեզ բախտ չվիճակվեր Երևանի Մաշտոցյան Մատենադարանի դիվանային քամուում գտնելու Արտակ եպիսկ. Սմբատյանցի իսկ ձեռքով ամենայն բարեխղճությամբ կազմված մեր ծառայությունների

մատյանը, հանդերձ մի քանի տասնյակ անձնական փաստաթղթերով:

Արտակ Եփրեմյանց, Հարությունյանց-Սմբատյանցի աշխարհական անունը եղել է Ղազար: Նա ծնվել է 1876 թ. մարտի 19-ին Տավուշ (այժմ Թավուզ) գյուղում: Նրա հոր անունն է եղել Եփրեմ Տեր-Հովակիմյան-Հարությունյանց (նույն և Սմբատյանց), իսկ մոր՝ Ջավահիր Հերապետյան: Փոքրիկ Ղազարը իր նախնական ուսումը իր ծննդավայրում մասնավոր անհատների և հոր մոտ ստանալուց հետո, 1887—1894 թթ. սովորում և ավարտում է հաջողությամբ Թիֆլիսի Ներսիսյան հոգևոր դպրոցը և ապա 1894—1897 թթ. դարձյալ հաջողությամբ ավարտում է նաև Էջմիածնի Գեորգյան ճեմարանի լսարանական ընթացքը: Դեռևս 1895 թ. Խրիմյան Հայրիկի կոնդակով նա իր վեց ընկերների հետ ընդունվում է Մայր Աթոռի միաբանների շարքում և ստանում ուրար

¹ Մաշտոցյան Մատենադարանի դիվան, Գաբրիելի արքեպիսկ. Հովսեփյանցի անձնական արխիվ, թղթապանակ № 94, վավերագիր № 8, Արտակ եպիսկոպոսի «Ցուցակ ծառայությանը»-ը և այլ անձնական գործեր, իսկական վավերագրեր և պատճեններ, 57 կտոր (90 թերթ):



Տ. Ակտակ եպիսկոպոս Սմբատյանց

Այս շրջանում է, որ Արվեստական Հայաստանի Հնությունների պահպանության կոմիտեն իր կողմից 1925—1926 թթ. Արտակ եպիսկոպոսի հիմնական մանրագրերը, ինչպես նաև իրենց հետևողական զետեղման վանքերի և բոլոր տեսակի հնությունների վրա: Հիշյալ փաստաթղթի միջոցով, որը ստորագրված էր կոմիտեի նախագահ Ա. Թամանյանի, գիտնական քարտուղար Աշխարհբեկ Քալանթարի և գործավար Աբրահամյանի կողմից, կոմիտեն «խընդրում էր խորհրդային բոլոր հաստատություններին ցույց տալ Արտակ եպիսկոպոսին լիակատար աջակցություն»¹: Երբ վստահված այս պաշտոնի ընթացքում էր, որ Արտակ եպիսկոպոսը պատրաստեց Տաթևի վանքի փաստալից պատմությունը, նրա արձանագրություններով և գավազանագրերով հանդերձ, ինչպես նաև Այուցիքի վեց այլ հայկական միջնադարյան հուշարձանների մասին իր ուշագրավ զեկուցագիրը, ուր բացի նրանց պատմական անցյալը ուրվագծելուց անհրաժեշտ առաջարկություններ էր բերում նրանց վերականգնման հետ կապված աշխատանքների մասին: Այս զեկուցագրի մի օրինակը նա ներկայացրեց Հայաստանի Հնությունների պահպանության կոմիտեին, իսկ մյուսը հանձնեց Ամենայն Հայոց կաթողիկոս Գեորգ Ե-ին, որը մեծապես գնահատելով Արտակ եպիսկոպոսի կատարած գործը իր իսկ ձեռքով զեկուցագրի վրա մակագրեց հետևյալը. «Օրհնյալ լինես Արտակ սրբազան, որքան հնարավոր է աշխատիր ազգային հնությունները և տաճարները պահելու և ըստ կարելիության նորոգելու»²:

1927 թ. փետրվարի 20-ին Լենինականում Ծիրակի թեմի թեմական պատգամավորական ժողովը Արտակ եպիսկոպոսին խորհրդով անգամ միանային ընտրեց Ծիրակի թեմի առաջնորդ և երրորդ անգամ հրավիրեց պաշտոնի: 1929 թ. դեկտ. 13-ին Թիֆլիսի թեմական պատգամավորական

ժողովը միանային նրան ընտրեց Վրաստանի հայոց թեմի առաջնորդ: Գեորգ Ե-ի մահից հետո նոր կաթողիկոսի ընտրության առթիվ նշանակվեց Արարատյան թեմի և ապա նաև Ջանգեզուրի (Սյունյաց թեմ) հայրապետական պատգամավորների ընտրության ղեկավար և լիազոր (1932 թ. հունիսի 22 և հուլիսի 17): 1932 թ. նոյեմբերի 19-ին Էջմիածնում գումարված համագլխից եկեղեցական ժողովը Արտակ եպիսկոպոսին ընտրեց Գեորգույն հոգևոր խորհրդի անդամ, իսկ 1933 թ. հունվարի 19-ին նշանակվեց Գեորգույն հոգևոր խորհրդի դիվանի դիվանապետ: 1935 թվականից նա դառնում է Արարատյան թեմում Ամենայն Հայոց կաթողիկոսի ներկայացուցիչ: Այդ պաշտոնում էլ ամփամանակ կերպով մահանում է 1937 թ.:

Ինչպես Մայր Աթոռում, այնպես էլ թեմերում հակառակ իր բոլորած այնքան բազմաթիվ գործունեության, Արտակ եպիսկոպոսը մեծապես ծախսեց իր ժամանակը և ուժերը իր շատ զգալի մասը գրավելու նաև գրական, պատմա-բանասիրական և թարգմանական գործերով: Նրա գրչից են պատկանում հրատարակված մի շարք գրքեր: Ծուրջ մեկ և կես տասնամյակ նա եղել է մեայում աշխատակիցը Մայր Աթոռի պաշտոնաթերթ «Արարատ» ամսագրին, ուր լույս է ընծայել ինքնուրույն և թարգմանական բազմաթիվ հոդվածներ, հոգեվոր քարոզներ, բարոյական հոդվածներ: Աշխատակցել է նաև Թիֆլիսի «Լույս» պարբերականին և Հայկապոլ լույս տեսնող Արտավազդ վարդ. Սյուրմեյանի «Տաթև» տարեգրքին:

Ստորև բերում ենք Արտակ եպիսկոպոսի քաղաքական և աշխատությունների մատենագիտությունը, կազմված իր իսկ ձեռքով, նրա անտիպ մնացած «Գրացուցակ» էջմիածնի տպարանից լույս տեսած գրքերի» գործից: Ինչ վերաբերում է նրա անտիպ գործերին, դրանք գտել ենք Մաշտոցյան Մատենադարանի դիվանային բաժնի գանազան ֆոնդերում:

¹ Որացույց 1935 թվականին Քրիստոսի ...Էջմիածին, 1935 և 1938, էջ 281:

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԱՐՏԱԿ ԵՊԻՍԿՈՍԱՅԻ ԵՐԿԵՐԻ

Ա.—Գրքեր

1 Հույն արևելքի հին եկեղեցական աստվածաբանական գիտությունը յուր ծավալման շրջանում (4—5-րդ դդ.), պրոֆ. Ն. Սաքարդա-ի, թարգմանությունը հունարենից, Վաղարշապատ, տպարան Մայր Աթոռ ս. Էջմիածնի, 1910 թ., 77 էջ (ճախապես

հրատարակված «Արարատ», Վաղարշապատ, 1910 թ., էջ 539—548, 627—636, 719—726, 846—857, 846—857, 1081—1088, 1141—1158):

2 Ամենագեղեցիկ բանը կյանքում, Հեգրի Դրոյմ-մոնդի, թարգմանությունը անգլիերենի գերմաներեն վերադրությունից, անդ, 1911 (56 էջ), ճախապես

- հրատարակված «Արարատ», 1910 թ. էջ 655—890, 808—815, 815—927, 1019—1025):
- 9 Եկեղեցու պատմությունը Տիեզերական ժողովների շրջանում, պրոֆ. Վ. Վ. Բոլոտովի, թարգմանությունը ռուսերենից, անդ, 1914, 201 էջ (Ճախապես հրատարակված «Արարատ», 1911 թ., հավելված № 4, էջ 1—8, 17—32, 33—48, 48—84, 85—80, 81—86, 87—112, 1912 թ. հավելված № 4, էջ 113—128):
- 4 Համառոտ պատմությունը Տաթևի վանքի, «Տաթև» տարեգիրք, 1980, Հալեպ, էջ 276—351 (ճանաչողություն):
- 5 Ա. Էջմիածնի միաբանության գրական-կրթական գործունեությունը և Մայր Աթոռի տպարանը, հրատարակության պատրաստումը, Գերատեսչությունը, Ժամհարությունները և հավելվածը՝ Սուրեն Բոլոտովի և Արթուր Հատիտյանի: Մայր Աթոռի տպարան, 1973, 184 էջ: Բնագիրը ճախապես հրատարակվել է «Էջմիածին», 1972, № 4—12):

Բ.—Հոդվածներ

- 8 Փարիսեցիք և մաքսավորը (թարգմ.) «Արարատ», 1904, է—Ը:
- 7 Ա. Հովհաննես Մկրտիչ (թարգ.), անդ ժ:
- 8 Բրիտանությունը և քաղաքականությունը արևմուտքում (թարգմ.), անդ, Բ—Գ:
- 9 Ամենամեծ տնտեսությունը, (թարգմ.), անդ, 1905, Բ:
- 10 Վերածնություն (թարգմ. գերմաներենից), անդ ժ—ԺԱ:
- 11 Եկեղեցական զգեստների ծագման ժամանակի մասին (թարգմ.), անդ, 1905, Զ, է, Ը, ԺԱ:
- 12 Կաթոլիկ եկեղեցին ձերանայում (թարգմ.), անդ, 1907, Դ:
- 13 Կ. Պ. Պրեդանոսյան (թարգ.), անդ, 1907, ԺԲ:
- 14 Բելգիական քիմիկ., Նեկրասով և Լորիս Մելիքով (պատկեր անցյալի, թարգմ.), անդ, 1908, Դ:
- 15 Պետրով Գր., Հիսուս փրկիչը (ռուս. թարգմ.), անդ, 1908, ԺԲ:
- 16 Փրկչի ծնունդը (գերմ. թարգմ.), անդ, 1910, Ա:
- 17 Ամուսնություն (ռուս. թարգմ.), անդ Բ:
- 18 Լեռան քարոզը (ռուս. թարգմ.), անդ, Գ:
- 19 Հալլեի գիսավորի հետ զուգահեյլաժ համաշխարհային դեպքերը (թարգմ.), անդ, Գ—Դ:
- 20 Նաուման Զ., Հարության հավատը (թարգմ.), անդ, Դ:
- 21 Նաուման Զ., Համբարձման պատմությունը (թարգմ.), անդ, Ե:
- 22 Պրոֆ. Ն. Մառի թուղթը Ամիոմ հնագիտական ինստիտուտի հիմնելու համար (թարգմ.), անդ, Ե:
- 23 Նաուման Զ., Ես եմ կյանք (թարգմ.), անդ, Զ:
- 24 Բայց ես ասեմ Զեզ, սիրեցեք զթշնամիս ձեր..., անդ, Է:
- 25 Փառք ի քարծուս Աստուծոյ (գերմ. թարգմ.), անդ, 1911, Ա:
- 26 Ի սկզբանե էր բան... (գերմ. թարգմ.), անդ, Բ:
- 27 Բրյատուս հարյա՛վ ի մեռելոց, անդ, Դ:
- 28 Գողգոթայի խաչի հաղթանակը, անդ, Ե:

- 29 «Հուսարեան», լուսատուրեան Երուսաղեմ..., (թարգմ.), անդ, Է:
- 30 Մանուկ Հիսուսը տաճարում (փոխադր. գերմ.-ից), անդ, Ժ:
- 31 Պետրոսի ուրացությունը (փոխադր. գերմ.-ից), անդ, ԺԱ:
- 32 Հիլլել (Մեկնաբանություն Աստվածաշնչի դրվագներից), անդ, 1912, է, Ը:
- 33 Աշխատելու արվեստը (փոխադր. գերմ.-ից), «Լույս», Թիֆլիս, 1908, № 3, 4, 5:
- 34 Հիսուս Բրիտանոսի երկրները (փոխադր. գերմ.-ից), «Արարատ», 1913, ԺԱ:
- 35 Նաուման Զ., Մեղք և մահ (թարգմ.), անդ, 1913, ԺԲ:
- 36 Նաուման Զ., Երեմիայի երկեր (փոխադր.), անդ, 1914, Ա:
- 37 Նաուման Զ., Աստուծոյ շնորհյալը (փոխադր.), անդ:
- 38 Համառոտ տեղեկագիր Ալեքսանդրապոլի վիճակի եկեղեցական-ծխական դպրոցների 1916/17 ուս. տարվա, անդ, 1917, Ը:

Գ.—Անտիպ գործեր

- 39 Գրացուցակ էջմիածնի տպարանից լույս տեսած գործերի, ձեռագիր 287 էջ:
- 40 Համառոտ տեղագրություն և պատմություն Այուդյայի թեմի նշանավոր վեց վանքերի, իրենց արձանագրություններով և պատկերներով (ընդգրկում է Հարանք ամապատի, Տաթևի մեծ ամապատի, Դիմոնիայի կուսանաչ ամապատի, Ծիծեռնավանքի, Որոտնա վանքի և Ղարաքիլիսայի ս. Հովհաննես եկեղեցու մասին): Ներկայացված է Հայաստանի Սովետական Հանրապետության Հնությունների պահպանության կոմիտեին⁹:
- 41 1821—1835 թթ. Լեհիցականի, Թիֆլիսի և Երեվանի բազմաթիվ եկեղեցիներում խռոված քարոզների և քարոզների ձրագրերի սևագրություններ: Ընդ 700 էջ ձեռագիր¹⁰:
- 42 Մի պատմական էջ Ալեքսանդրապոլի տաճկենից առաջին գրավման պատմությունից, 1918, 2/15, 38 թերթ ձեռագիր (հրատարակության է պատրաստել Մաշտոցյան Մատենադարանի դիվանային բաժնի վարիչ Ավ. Աղաբաբյանը)¹¹:
- 43 Ալեքսանդրապոլի եկեղեցիների կառուցման մասին պատմական տեղեկություններ (հրատարակության է պատրաստել Մաշտոցյան Մատենադարանը):

⁹ Մաշտոցյան Մատենադարանի դիվան, Գարեգին արքեպիսկ. Հովսեփյանցի արխիվ, թղթ. № 84, վավ. № 3ա:

¹⁰ Մաշտոցյան Մատենադարանի դիվան, արխիվ գանազան հեղինակների, թղթ. № 87, վավ. № 15, I—III, պահպանվում է երեք տարբեր ընդգրկման կազմերով:

¹¹ Անդ, թղթ. 88թ, վավ. № 19—198:

¹² Անդ, թղթ. № 82, վավ. № 3:

նի դիվանային ըստնի վարիչ Ավ. Աղամյանը)¹³:

44 Աղզատոհմ Ամբատյանցների, Գախախայր Ամբատից սկսած, Զթ.¹⁴:

45 Համատոտ տեղեկագիր Ընթերցի Ռայոց թեմական խոյվորդի միամյա գործունեության, 1828 մարտ / 1928 մարտ¹⁵:

46 Արտակ եպիսկ. Ամբատյանցի թղթակցությունները և զանազան գործերի սեագրությունները¹⁶: Նամակներ և ձեռագիր ընդամենի այլ գործեր:

• •

Արտակ եպիսկոպոս Ամբատյանցի համար Էջմիածնի տպարանի պատմության հարցերով զբաղվելը պատահական երևույթ չի եղել: Իբրև Մայր Աթոռի միաբան վանքի հովանու ներքո կատարած իր բազմամյա և բազմաթիվ գործունեության ընթացքում հաճախ է, որ նրան հանձնարարված է եղել զբաղվելու նաև տպարանով: Դեռևս տարակազ, 1897—1898 թթ. Խրիմյան Հայրիկի հրամանով նշանակվել է Մայր Աթոռի տպարանական ժողովի անդամ: Ավելի ուշ, 1903 թ. հուլիսին, դարձյալ Խրիմյան Հայրիկի կարգադրությամբ նրան է վստահվում նաև Մայր Աթոռի տպարանի պատասխանատու անձ լինելու պաշտոնը, որը վարում է մինչև 1904 թ. նոյեմբեր ամիսը: Անշուշտ Ամբատյանցը շատ ավելի խոր կերպով հաղորդակից է լինում Մայր Աթոռի տպարանի անցյալի և ներկայի վիճակին երբ 1910 թ. փետրվարի 1-ին ս. Սիմոնի № 250 կարգադրությամբ նշանակվում է տպարանի տեսչի կարևոր պաշտոնին, այդ աշխատանքում մնալով մինչև 1911 թ. հուլիս ամիսը: Այդ ժամանակաշրջանում է, որ նա ըստ իր իսկ թողած նշումների 1) ցուցակագրել, դասավորել և տեղավորել է 1771 թ. սկսած Մայր Աթոռի տպարանի գրատան թուղթ գրքերն ու «Արարատ» ամսագրի տարեկան համարները, առանձին նոր դարակների մեջ դարսելով: 2) Առանձին մայր մատյանի մեջ արձանագրել է տպարանի գույքը, ինչպես տպագրված գրքերն ու «Արարատ»-ները, նույնպես և մյուս շարժական գույքը՝ մեքենաներ, գործիքներ, տպարանական-կազմարարական, ծուլարանի վերաբերյալ գործիքներ, կշռել է հատկապես թուղթ տառերը, շպոնները, զարդերը և այլն և արձանագրել մայր մատյանում: 3) Ցուցակագրել է տպարանի թղթի պահեստում ունեցած թուղթը և կազմարարական այլ նյութերը և արձանագրել մայր մատյանի մեջ: Այդ մայր մատ-

յանի մի օրինակը ծապավինած, կնքած ու վավերացրած ներկայացրել է ս. Սիմոնին, մյուսը պահելով տպարանում¹⁷: Իր առօրյա գործնական նշանակություն ունեցող հիշյալ աշխատանքներից բացի Արտակ եպիսկ. Ամբատյանցը ձեռնամուխ է եղել պեղելու նաև տպարանի անցյալը: Այս առումով առաջին հերթին պետք է նշել նրա իսկ միջոցով Էջմիածնի 1771 թ. առաջին տպարանի հիմնադիր վեմարձանագրության, ինչպես նաև տպարանի մամուլների պտուտակների հայտնաբերումը, որոնք այժմ պահվում են Հայաստանի պատմության թանգարանում: Էջմիածնի տպարանի պատմությունը գրելու գործում անկասկած կարևոր նշանակություն է ունեցել 1912 թ. հայ տառերի գյուտի 1500-ամյա և հայ տպագրության սկզբնավորման 400-ամյա զույգ փառավոր հոբելյանները: Ամենայն հավանականությամբ հեղինակը իր աշխատության նախնական օրինակը արդեն իսկ այս տոնակատարության օրերին մեծ մասամբ ավարտած պետք է լիներ: Դրա օգտին է խոսում այն փաստը, որ Մաշտոցյան Մատենադարանի դիվանային բաժնի Զանազան հեղինակների ֆոնդում պահվում է Ամբատյանցի այս աշխատության նախնական սևագիր օրինակը, որի վերնագիրն է. «Ս. Էջմիածնի միաբանության գրական գործունեությունը և Մայր Աթոռի տպարանը. 1512, Չորս հարյուրամյակ, 1912, Արտակ վարդապետ Ամբատյանց, միաբան ս. Էջմիածնի»: Այդ ձեռագիրը բաղկացած է միայն 111 թերթից¹⁸: Պետք է կարծել, որ այն նախատեսված էր հրատարակել առանձին և կամ զույգ հոբելյանների առթիվ Էջմիածնի կողմից հրատարակվող «Ծողակաթ» հայագիտական ժողովածուում: Սակայն այն ըստ երևույթին դեռևս անավարտ մնացած լինելով հնարավոր չէրավ հրատարակել, իսկ հետագայում «Ծողակաթ»-ն էլ չունեցավ իր հաջորդ հատորները: Համենայն դեպս սույն աշխատությունը 1920 թ. արդեն հեղինակի կողմից ավարտված էր համարվում, այդ էր պատճառը, որ այն այդ թվականին հեղինակի կողմից իբրև ավարտաճառ ներկայացվեց ծայրագույն վարդապետության աստիճան ստանալու: Նրան ձեռնադրող Զավեն եպիսկոպոսի կողմից տրված վկայագրում ասված է, որ նա այդ աստիճանին արժանացել է. «Վասն հարուստ

¹⁷ Մաշտոցյան Մատենադարանի դիվան, Գաբրիել արքեպիսկ. Հովսեփյանցի անձնական արխիվ, թղթ. № 84, վավ. № 8, «Ցուցակ ծառայության...», էջ 24ա—25ա:

¹⁸ Մաշտոցյան Մատենադարանի դիվան, արխիվ զանազան ձևերի վրա, թղթ. № 87, վավ. № 14:

¹³ Անդ, թղթ. № 82, վավ. № 28:

¹⁴ Անդ, թղթ. № 87, վավ. № 18:

¹⁵ Անդ, թղթ. № 87, վավ. № 18:

¹⁶ Անդ, թղթ. № 87, վավ. № 17:

նեռագիր աշխատությանն այսու վերնագրով. «Ա. Էջմիածնի միաբանության գրական գործունեությունը և Մայր Աթոռի տպարանը—1512—1920 չորս հարյուրամյակ» և վասն քարոզչական ձրիցն ձմտությանն ս. Գրոց»¹⁹:

Սակայն հետագայում ևս Արտակ եպիսկոպոսը շարունակել է աշխատել հնարավորության չափով նրա ճոխացման վրա: Չբավականանալով դրանով նա հիշյալ գործից բացի, իբրև անմիջական բաղկացուցիչ մաս վերջինիս, պատրաստել է Էջմիածնի միաբանների կողմից հրատարակված գործերի գրացուցակ, որը ևս իր հիշյալ ուսումնասիրությանն նման ապրել է իր ստեղծագործական տարբեր շրջանները: Նա ևս պետք է կարծել, որ 1912 թ. դեռևս ամբողջացած չլինելով ավարտվել էր 1920 թ.: Այդ մասին է վկայում Մաշտոցյան Մատենադարանի դիվանային բաժնի Ջանգաճ հեղինակների ֆոնդում պահվող հիշյալ գրացուցակի սեփագիր օրինակը բաղկացած 175 թերթից²⁰: Նշենք, որ դեռևս 1917 թ. հունիսի 20-ին թվագրված և այժմ Մատենադարանի դիվանային բաժնի Գարեգին արքեպ. Հովսեփյանցի արխիվում պահվող տպագիր ազդեցիկ երևում է, որ Արտակ եպիսկոպոսը դիմելով Էջմիածնի միաբան հեղինակներին գրել է, որ իրեն տրամադրել «Եթե հնարավոր է մեկ ամսվա ընթացքում մեկ Զեր հեղինակությանց և հոդվածների ցուցակը, նշանակելով տեղը, ժամանակը, թիվը և արժեքը, որպեսզի հնարավորություն ունենամ ստուգելու և լրացնելու իմ աշխատությունս»: Այդ ազդեցի 37 օրինակ է պահվում հիշյալ արխիվում և որոնցից միայն երեքն են անվանագրված և ուղղված Միաբան եպիսկոպոսին, Գալուստ Տեր-Մկրտչյանին և Ներսես եպիսկոպոսին²¹: Հետագայում ևս իր աշխատանքները շարունակելիս, Արտակ եպիսկոպոսը Գարեգին եպիսկ. Հովսեփյանցին գրած իր անթվակիր նամակում, որը ըստ Մատենադարանի ցուցակագրողի պետք է որ գրված լիներ 1928 թ. մայիսին, գրել է. «Հ. Գարեգին սրբազան, իմ այն մի աշխատությանն հետ ծանոթ եք, միա-

բանների գործունեությանն առթիվ գրած, ուզում եմ գրել Վիեննա, ճոցս գրաստան ցուցակն ստանամ: Արդյոք ո՞ւմ դիմեմ, խնդրում եմ անուն և հասցեն գրեք»²²: Վերջապես 1934 թ., երբ ամբողջ աշխարհի հայությունը նախապատրաստվում էր տոնելու Աստվածածնի հայերեն թարգմանության 1500-ամյակը, այդ ժամանակ արդեն Արտակ եպիսկ. Սմբատյանցը տպագրության համար պատրաստել էր ինչպես իր ուսումնասիրությունը, այնպես էլ վերջինիս բաղկացուցիչ մասը կազմող Գրացուցակը, դրանք ձեռնելով այդ մեծ հոբելյանին:

Ինչո՞ւմ է կայանում Մեսրոպ եպիսկ. Սմբատյանցի ներկայումս հրատարակված աշխատության արժեքը: Սույն աշխատությունը գրվելուց առաջ, այնպիսի անվանի հայագետներ, ինչպիսիք են Հ. Գ. Զարրիանյանը, Ալ. Երիցյանը, Հ. Ա. Ղազիկյանը, Լեոն. Գյուտ ավ. քահանա Աղանյանը, Թեոդիկը, Գ. Լևոնյանը և ուրիշներ, այս կամ այն չափով թեև անդրադարձել են Էջմիածնի տպարանի պատմությանը և իրենց արժեքավոր լույսն են մտնել հայ տպագրության ընդհանուր պատմության ստեղծման գործում, սակայն նրանցից և ոչ մեկը ձեռնամուխ չի եղել ուղղագծելու մայր հողի վրա ստեղծված առաջին տպարանի հանգամանակից պատմությունը: Այդ տեսակետից Արտակ եպիսկ. Սմբատյանցի սույն գործը առաջինն էր, ուր ամբողջական կերպով շարադրվում էր Էջմիածնի տպարանի պատմությունը: Նա ընդգրկում է Մայր Աթոռի տպարանի հիմնադրումից էլ առաջ, արտասահմանում Էջմիածնի անունով գործող աստանդական տպարաններից մինչև Էջմիածնի տպարանի ստեղծումը (1771 թ.) և վերջինիս 150-ամյա բովանդակ պատմության ընդարձակ ժամանակաշրջանը:

Աշխատության հաջողությանը մեծ չափով նպաստել է հեղինակի ցուցաբերած այն բացառիկ բարեխղճությունը դեպի իրեն այն ժամանակ մատչելի եղող Էջմիածնական հրատարակություններն ու նրանցում գրող-ըմբողջ հիշատակարանները: Նրա աչքից չեն վրիպել մեկ իրեն նախորդող հայագետների գրած և հիշյալ թեմայի հետ առնչվող մեծագրություններն ու մամուլում ցրված հոդվածները:

Աշխատության ամենամեծ արժանիքներից է հատկապես Էջմիածնի տպարանի պատմության հետ անմիջականորեն կապված և այդ պատմության ամբողջացմանը նպաստող արխիվային անտիպ նյութերի օգտա-

¹⁹ Մաշտոցյան Մատենադարանի դիվան, Գարեգին արքեպիսկ. Հովսեփյանցի արխիվ, թղթ. № 84, վավ. № 8, էջ 8, փաստ. 8:

²⁰ Մաշտոցյան Մատենադարանի դիվան, արխիվ զանազան հեղինակների, թղթ. № 87, վավ. № 19 (պակասավոր):

²¹ Մաշտոցյան Մատենադարանի դիվան, Գարեգին արքեպիսկ. Հովսեփյանցի արխիվ, թղթ. № 84, վավ. № 4:

²² Անդ, թղթ. № 86, վավ. № 1200:

գործումը: Այս առումով միանգամայն արժեքավոր են Գեորգ Դ-ի և Խրիմյան Հայրիկի գրագրություններից մեջ բերված այն հատվածները, որոնք նոր լույս են սփռում Էջմիածնի տպարանի ցարդ մեծ մասամբ անհայտ մնացած ներքին և արտաքին հարաբերություններին վերաբերող մի շարք հարցերի վրա:

Իբրև Մայր Աթոռի տպարանի հետ անմիջականորեն շփման մեջ եղող անձնավորություն, Արտակ եպիսկ. Սմբատյանցը սույն աշխատությունը գրելիս ունեցել է նաև այն բացառիկ առավելությունը, որ նա ոչ միայն քաջամտությամբ է եղել Էջմիածնի տպարանի պատմությանը, այլև իբրև տպարանական գործի լավատեղյակ անձնավորություն, հնարավորություն է ունեցել անդրադառնալու նաև տպարանական գործի հետ կապված մասնագիտական մանրամասներին: Սույն աշխատությունում արժեքավոր է նաև Էջմիածնի տպարանի վերջին շրջանի գործունեությանը վերաբերող հատվածը, ուր հեղինակը անդրադառնում է ինչպես տպարանի սարքավորմանը, այնպես էլ նոր տեսչի (Երվանդ վարդապետ Տեր-Մինասյան) և տպագրող ու գրաշար վարպետների եռանդուն գործունեությանը:


Ինչպես նշվեց, հեղինակը չբավականացավ միայն իր սույն ուսումնասիրությամբ, միանգամայն իբրև լրացում իր գործի խիզախորեն ձեռնամուխ է եղել նաև կազմելու Էջմիածնի բոլոր հրատարակությունների, այդ թվում նաև Էջմիածնի անունով արտասահմանում գործած հնագույն տպարանների-հրատարակությունների մատենագիտությանը: Ավելին, հաղթահարելով բազմաթիվ դժվարություններ հեղինակը ձեռնարկել է նաև Էջմիածնի բոլոր միաբանների հեղինակությունների լիակատար մատենագիտություն կազմելու տաղտկալի ու մաշեցնող, սակայն շնորհակալ գործին:

Սույն գործի հրատարակության համար հիմք է ընդունվել Արտակ եպիսկ. Սմբատյանցի կողմից վերջնական կերպով ավարտված համարված քնագիրը: Այն պահվում է Մաշտոցյան Մատենադարանի դիվանային բաժնի Գարեգին արքեպ. Հովսեփյանցի արխիվում, թղթապանակ № 84, վավերագիր 1ա: Նա բաղկացած է 178 մեծադիր ձեռագիր էջերից և ունի հետևյալ բաժինները. ա) Հատաշարած (բ) Աղբյուրներ, գ) Ներածություն (Ա.—ԺԳ մաս կամ գլուխ): Բնագիրը տպագրության պատրաստելու ընթացքում հեղինակի կողմից սկզբնաղբյուրներից և գրականությունից մեջ բերված պարբերությունները մեկ առ մեկ համեմատվել և ճշտվել են իրենց բուն սկզբնաղբյուրների և գրականության հետ, ուղղվել են նկատվող վրիպումները և լրացվել նշար-

վաղ բուց թողումները: Հեղինակի կողմից սպասարկված, տակալն չնշված մի շարք ուղղումներ և գրքերի անուններ վերականգնվել են ծանոթագրությունների լսածնում: Հեղինակի կողմից իր ժամանակին օգտագործված արխիվային նյութերի մեծ մասը երկար որոնումներից հետո հնարավոր է եղել գտնել և համեմատել Հայաստանի կենտրոնական պատմական արխիվում և Էջմիածնի Մայր Աթոռի ձեռագրատանը և դարձյալ ծանոթագրությունների միջոցով ցույց են տրվել պահվող արխիվի անունը, վավերագրի կամ ձեռագրի համարը և էջը: Հեղինակը իր գործի տպագրության համար նախատեսած է եղել մի շարք լուսանկարներ, դժբախտաբար այդպիսիք հնարավոր չեղավ գտնել Մաշտոցյան Մատենադարանի դիվանում, ուստի հրատարակիչները, խնայելով հեղինակի ցանկությունից, ավելացրել են համապատասխան նկարներ հայ տպագրության վերաբերյալ:

Մայր Աթոռի տպարանի պատմության ամբողջացմանը նպաստելու ցանկությամբ անհրաժեշտություն է զգացվել սույն աշխատության վերջին կցելու հավելվածական նյութերի բաժին: Հավելվածում բերված նյութերը վերաբերում են Էջմիածնի տպարանի հին և նոր պատմության մի շարք կարևոր հարցերին: Ուշագրավ են Փարիզի Նուպարյան մատենադարանի կողմից ուղարկված և 1772 թ. թղթի գործարանի համար վարպետներ գտնելու մասին գրված փաստաթղթի թարգմանությունը, Մաշտոցյան Մատենադարանի դիվանային բաժնի նախկին վարիչ, Հայրենական մեծ պատերազմում զոհված Հարություն Աբրահամյանի (1807—1843) Էջմիածնի թղթի գործարանի մասին հրատարակած արժեքավոր հոդվածը, Մատենադարանի ձեռագրական բաժնում պահվող Վ. վրդ. Բաստամյանցի թողած անտիպ հուշերը Էջմիածնի տպարանի 1870-ական թվականների վերաբերյալ, Մոսկվայի պետական պատմական արխիվում պահվող և Էջմիածնի հրատարակություններին վերաբերող փաստաթուղթը, Խրիմյան Հայրիկի կողմից տպարանի մասին գրված մի շարք գրությունները, Գարեգին եպիսկ. Հովսեփյանցի գրած հոդվածը տպարանի նոր շրջանի մասին և այլն:

Արտակ եպիսկ. Սմբատյանցի հրատարակված «Սուրբ Էջմիածնի միաբանության գրական-կրթական գործունեությունը և Մայր Աթոռի տպարանը» ձեռնարկի գործը մեծ չափով կնպաստի Մայր Աթոռի տպարանի, նրա միաբանության կողմից հայագիտությանը մատուցված երախտիքը ճանաչելի դարձնելուն և դրա հետ միասին նաև հայ տպագիր գրքի և հայ մշակույթի պատմությունը ամբողջացնելու շնորհակալ գործին:



Ռ. ԱԹԱՅԱՆ

ԿՈՄԻՏԱՍԻ ԱՌԱՋԻՆ ՏՊԱԳՐՎԱԾ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ

(«Ազգային օրհներգի» ստեղծման պատմությունից)

Երկրտասարդ Կոմիտասի առաջին ստեղծագործություններից մեկը և տպագրված առաջին ստեղծագործությունը մի խմբերգ է, որ հայկական ձայնանիշերով հավելվել է «Արարատ» ամսագրին և հետևյալ խորագիրն է կրում. «Ազգային օրհներգ. Գրեց Արշակ Թաճեան, ուսանող Գ յսարանի ճեմարանի Մայր Աթոռոյ ս. Էջմիածնի. երաժշտութիւն Սողոմոն սրկ. Սողոմոնեանի, ուսանող Ա յսարանի ճեմարանի Մայր Աթոռոյ ս. Էջմիածնի: 1891, մարտ 5»:

Չորս տարի անց, նույն խոսքերով մի երկրորդ «Ազգային օրհներգ», նույնպես հայկական ձայնանիշերով և երգչախմբի համար գրված, վերստին հավելվել է «Արարատին» և հետևյալ ծանոթությունն ունի՝ «Խօսք Արշակ Թաճեանի, երաժշտութիւն Կոմիտաս վարդապետի, 1895, ապրիլ 18, տպարան ս. Էջմիածնի»:

Անցյալ դարի վերջերին Արևելյան Հայաստանում Մայր Աթոռ ս. Էջմիածնին և նրա ղեկավարին ձոնվող նման երգերի երեկան գալը ժամանակի ազգային կյանքի գործնական պահանջներով էր թելադրված: Տվյալ դեպքում պատահական չէ, որ հեղինակներն իրենց ստեղծագործությունն անվանել են «Ազգային օրհներգ»:

Շուրջ 80 և ավելի տարիներ առաջ տպագրված այդ ստեղծագործությունները, բացի իրենց պատմական ընդհանուր հետաքրքրականությունից, Կոմիտասի ստեղծագործական կենսագրության իմաստով ևս մասնավոր հետաքրքրականություն ունեն: Ստորև կփորձենք խմբերգերը գնահատել հենց այդ տեսակետից:

Անդրադառնալով առաջին «Ազգային օրհներգին»:

Մեղեդին եվրոպական և արևելյան երևելալից ակունքներից է թխում, բայց ամբողջական է, զարգացող, հանդիսավոր և ըստ ամենայնի հուզական: Երգը գրված է քառածայն խմբի համար: Երգչախմբի ձայները նշված են՝ Ջիլ, Բարձր, Սոսկ, Բամբ: Կոմիտասի հետագա տարիների կիրառումով (Ջիլ-ը՝ նաև Սուր) այս անվանումները նշանակել են՝ Սոպրանո, Ալտ, Տենոր, Բաս: Բայց այստեղ դրանք սոսկ պայմանականորեն նշանակում են՝ 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ ձայն, քանի որ խմբերգի բազմաձայն շարադրությունից, նրա տոնայնական դիրքից և ձայնածավալից պարզ երևում է, որ այն հատկացված է ոչ թե խառն, այլ միաստոր քառաձայն խմբի: Գևորգյան ճեմարանի պայմաններում դա եղել է պատանիների խումբը: Ուստի երգի արտահայտչականությունը գնահատելիս հենց այդպիսի խմբի՝ դիսկանտների և պատանի ալտերի հնչյունը պետք է նկատի ունենալ:

Բուն ներդաշնակությունը, սակայն, ինչպես հեղինակն ինքը կասեր, կազմված է այնպես, որ հնարավոր լինի երգն հնչեցնել, քառաձայնից բացի, նաև երկձայն և եռաձայն: Ի դեպ՝ սրա հետ են կապված ձայների որոշ խաչաձևումները: Այս բանն արված է կատարման գործնական հնարավորությունները մեծացնելու նպատակով: Ուրեմն, խոսքը փաստորեն մինչև խմբերգի երեք տարբերակների մասին է. Ա տարբերակ՝ 1-ին և 2-րդ ձայն, Բ տարբերակ՝ 1-ին, 2-րդ և 3-րդ ձայներ, և Գ տարբերակ՝ քառաձայն: Հիմնական ձևը երկձայնն է, բաղկացած

գլխավորապես «բարեհնչուն» հարմոնիկ իմտերվացներից, օգտագործելով նույնիսկ «ոսկյա» կոչվող ընթացքի տարրեր: Իսկ 3-րդ և մանավանդ 4-րդ ձայնը որպես լրացում են գոյացել: Դրանով էլ պետք է բացատրել տեղ-տեղ ձայների օկտավային կրկնումը՝ քառաձայնի փոխարեն փաստորեն երեք կամ երկու տարրեր ձայն (օրինակ, երգի սկզբում, որտեղ հեղինակը փորձել է ձայների զուգահեռականությունը նրանց սիմֆոնիկական տարբերակումների միջոցով «կտրել»):

Ներդաշնակության մեջ պարզ զգացվում է հեղինակի մասնագիտական գիտելիքների և փորձի պակասը, և դա հասկանալի է: Կոմիտասն այդ ժամանակ եվրոպական առումով երաժշտության տեսության և մանավանդ ներդաշնակափոխության բոլորովին ծանոթ չէր: Հետագայում, և այն՝ շուտով, նա օկտավներով և մաքուր կվինտներով զուգահեռ շարժում ձայններից այլևս չէր տալիս, գրեթե չէր օգտագործում նաև ոբեր-սոնո («հակասություն») հիշեցնող հնարը (տե՛ս, օրինակ, «Իսկ հիմնած» տակտը): Լիակալն, տեսական գիտելիքների պակասը խմբերգում հատուցված է ոչ-մասնագետ երաժշտի ակնառու երաժշտականությամբ և նրա՝ հարմոնիայի բնական ու ինքնատիպ զգացողությամբ:

Լյսպես, նկատելի հաջողություն պետք է համարել երգի փոքր ծավալի սահմաններում տոնայնության ցայտուն ցուցադրումը տարբեր ոլորտներով, տոնայնական լուրատեսակ շեղումները, փոքր և մեծ տեքստի վրա մաժոր հարմոնիաների վառ հակադրությունները: Սրանք դասագրքից կամ արևմտաեվրոպական ռոմանտիկական ողողության կոմպոզիտորների ստեղծագործություններից սերտաժ օրինաչափությունների դրսևորումներ չեն (նա այդ դասագիրքն ու ստեղծագործությունները չէր էլ տեսել), այլ բխում են իրոք հարուստ երաժշտական ներքին ունեցող պատանու սեփական ընկալումից:

Ձայների հենց այդ նույն՝ մաքուր կվինտներով զուգահեռ շարժումը ներդաշնակափոխության դպրոցական դասընթացում սրբազործված կանոնների խախտում չէ այստեղ: Խմբերգի ներդաշնակության տրամաբանությունից հետևում է, որ բազմաձայնության եվրոպականորեն չափված-ձևված կանոնավորությունը (ներառյալ՝ ձայնաշարության և հարմոնիաների մետրական դասավորության կանոնները) խորթ է եղել Կոմիտասի լսողությանը, նա եմագիտակցորեն խուսափել է դրանից, գերադասել ձայների

շարժման ինքնուրույնությունը, նրանց անկախությունը:

Երգում տեղ կա, ուր դեպի բենկորճ ձգտող վերնախաղը կիսվեր ունի (ինչպես հայ եկեղեցական երաժշտության մի քանի ձայնեղանակներում է լինում), բայց հեղինակի հոգը չէ, թե այդ բարձրացված վերնախաղը նույն ակորդի մեջ գտնվող սովորական (չբարձրացված) ներքնախաղի հետ կազմում է ոչ թե մաքուր, այլ լայն կվինտ*: Հոգը չէ, որովհետև նա եվրոպական ներդաշնակության կանոններով չի մտածում և լսում: Նրա հարմոնիաները սեփական լադային երանգ և ինքնուրույն ընթացք ունեցող մեղեդիների զուգորդումներ են, ուրեմն, նրա համար, բազմաձայնության մեջ, ակորդային գոյացումներից բացի, կամ՝ դրանցից առավել, սկզբունքային նշանակություն ունեն մեղեդիական գծերը, առանձին ձայների լադաելնչային էությունը: Այս երևույթները (ավելացրած դրանց նաև բազմատոնայնության որոշ տարրերը), որ այս խմբերգում դեռևս «սաղմնային» վիճակում են, հետագայում, դառնում են Կոմիտասի ինքնատիպ բազմաձայնության ոճական գծեր:

Ստորև, հայկական ձայնաճիշերից եվրոպական նոտագրության փոխադրած վիճակում՝ Կոմիտասի առաջին «Ազգային օրհներգը»՝ առաջին տպագրված ստեղծագործությունը: Փոխադրելիս հայկական փուշն ընդունել ենք ոե, ինչպես Կոմիտասն էր ընդունում (ուրեմն ամբողջությունը՝ սոլ մաժոր), երգում արված են խմբագրական անցած շտկումներ, որոնք ոչ մի չափով չեն շոշափում հեղինակի երաժշտական տեքստի իսկությունը:

Ձայած հեղինակի անփորձությունից բխող որոշակի թերություններից, այս խմբերգը մի բովանդակալից, շատ բանով զրավիչ և երաժշտական-մասնագիտական առումով խիստ հետաքրքրական ստեղծագործություն է: Ձենք կասկածում, որ իր ժամանակ էջմիածնում այն գոնե մեկ անգամ, Կոմիտասի հանպատրաստից կազմած մի խմբով (քանի որ նա ճամարանում երգեցությունը դասեր դեռևս չէր վարում) պետք է հնչած և, առնվազն, բավարար տպավորություն գործած լինի: Եվս ավելի ցավալի է նկատել, որ ժամանակին այդ ստեղծագոր-

* Դրա հետևանքով փաստորեն գոյացում է մի լուրատեսակ անհավասարաչափ տեմպերացված ալոորդ, որը որպես ժողովրդական երաժշտական մտածողությունից բխող «սոցորային» երևույթ, կարող էր և երիտասարդ կոմպոզիտորի լսողության մեջ գունագեղ համահնչյուններ ստեղծելու նկրդմով պար առաջացած ձգտման արդյունք լինի:

ԱԶԳԱՅԻՆ ՓՐՆՆԵՐԿ

(1891 թ.)

Խոսք՝ ԱՐԵԱԿ ՔԱՇՃԱՆԻ
Երաժշտ.՝ ՍՈՂՈՍՈՆՆՆ ԵՐԿ. ՍՈՂՈՍՈՆՆԱՆԻ

4/8

p

Sopr. I II

Ա - ՄԵՑ Բա - յի սըր-տից բը - խած ԼԵ - սի՛ր այս ծայցն, ո՛վ Աս -

p

Alt. I II

Ա - ՄԵՑ Բա - յի սըր-տից բը - խած ԼԵ - սի՛ր այս ծայցն, ո՛վ Աս -

p

տուած - Եր - կար կեանք տո՛ւր Հայ - րա - պե - տի՛ն, Էր - կար օ -

p

տուած, Եր - կար կեանք տո՛ւր Հայ - րա - պե - տի՛ն, Եր - կար օ -

p *f*

րէր Բա - յոց Բօր, Եր - կար կեանք տուր Հայ - րա - պե - տի՛ն, Եր -

p *f*

րէր Բա - յոց Բօր, Եր - կար կեանք տուր Հայ - րա - պե - տի՛ն, Եր -

կար օ - թեր հա - յոց հօր: *f* Տե՛ր. աճ - սա - սաճ պա

Հա յոց հօր: *f* Տե՛ր. աճ - սա - սաճ պա

հի՛ր դու միշտ Բո իսկ հիմ-ճած Մայր Ա - թոռ: *p* *f*

հի՛ր դու միշտ Բո իսկ հիմ-ճած Մայր Ա - թոռ: *p* *f*

հի՛ր դու միշտ Բո իսկ հիմ-ճած Մայր Ա - թոռ: *p* *f*

2. *rit.* *f* Մայր Ա - թոռ. Մայր Ա - թոռ:

Մայր Ա - թոռ. *f* Մայր Ա - թոռ:

Մայր Ա - թոռ. *f* Մայր Ա - թոռ:

ծությունը քննադատության կողմից պահա-
րակվել, բառիս բուն իմաստով ոչնչացվել է:

Միակ քննադատականը (մի երկրորդը
մեզ չի հաջողվել գտնել) ամստորագիր է,
տպագրված «Տարագում» (1891 թ., ապրի-
լի 21, № 15, էջ 226, Թիֆլիս) և այս է.

«Արարատ» ամսագրի վերջին համարի
հետ իբրև հավելված ուղարկված է մի հա-
կական ձայնագրությանը երգ: Այդ երգն
ինքնընտանիքյան մի շատ անհամ եղանակ
է, սակայն, զարմանում ենք, թե ինչպես մի
և, առանց ուսումնասիրելու երաժշտու-
թյունը, առանց հասկանալու, թե կոմպոզի-
տորության համար պետք է սովորած լինել
ձայնական երաժշտության բոլոր կանոննե-
րը, թույլ է տալիս իրան չորս ձայնով մի
խմբերգ հորինել, հետո ձայները զիլ, բար-
ձրը, սոսկ, բամբ անուցներով բաժանել, ա-
ռանց պահպանելու ամենաչնչին կանոն
անգամ: Օրինակ, պարոն հեղինակը (կոմ-
պոզիտորը) զիլ ձայնին (դիսկանտ) ստի-
պում է երգելու ցածր ֆա և ոչ միայն ֆա,
այլև մի, որը միայն բարիտոնի ձայն է. իսկ
տենորին տալիս է երգելու ցածր դո և միե-
չեփիսկ դո-բեմոլ: Դեռ չենք ասում և այն,
որ չորս ձայնով այդ երգը երբ երգվի, ուրիշ
ոչինչ չի լսվի նրանից, եթե ոչ չորս գյու-
ղական տիրացուների խաղացիչ ու աչա-
զան միասին երգված մի երգ, որը ոչինչ
ներդաշնակություն չունի իր մեջ:

Այսպես, գլխավոր մեղադրանքն այն է,
որ «պարոն հեղինակը» առանց ուսումնա-
սիրելու «ձայնական երաժշտության բոլոր
կանոնները», իրեն թույլ է տվել քառաձայն
խմբերգ հորինել: Մինչդեռ, պարոն քննադա-
տը իրեն թույլ է տվել գրչի մի հարվածով
ոչնչացնելու ընդհանուր առևանք արժեքա-
վոր մի ստեղծագործություն, երբ ինքը նույն
երաժշտության կանոններին տիրապետած է
եղել այնքան, որ չի կարողացել ձայնանի-
շերն իսկ ճիշտ կարդալ:

Հիրավի, Կոմիտասի խմբերգի պարտի-
տուրը նայելիս, հայկական ձայնանիշ իմա-
ցողի համար պետք է պարզ լիներ, որ երգի
1-ին ձայնում գտնվող ֆա-ն և մի-ն (եթե
անգամ երգը կարդանք ֆա մաժորում, ինչ-
պես կարդացել է քննադատը) «ցածր» հըն-
չյուններ չեն, այլ 1-ին օկտավի, և դիսկանտ-
ի համար միանգամայն մատչելի հնչյուն-
ներ են. որ 3-րդ ձայնում դո-բեմոլ (մեր օ-
րինակում փնտրիք ռե-բեմոլ) ընդհանրա-
պես չկա, իսկ «ցածր» դո-ն և քննադատի
չնկատած ավելի ցածր լյա-ն (մեր օրինա-
կում՝ համապատասխանաբար՝ ռե և սի),
եթե անգամ տենոր էր երգելու, ապա դարձ-
յալ սովորական, հարմար հնչյուններ են:

Այնպիսի է ասել, թե ձայնանիշերը կարդալ
չկարողանալուց հետո ո՞րքան իրավացի
կարող էին լինել քննադատի մյուս դիտո-
ղությունները*: Մինչդեռ, դժվար չէ պատկե-
րացնել, թե այդ «քննադատականը» որքա՞ն
պետք է արկաներ երգի և նրա հեղինակի
հեղինակությունը, «կոտոր գցեր» սկսնակ,
ինքնուս երաժշտին:

Եթե հիշյալ «քննադատությունը» օրեկ-
տիվորեն մի օգուտ բերել է՝ այն է, ուր իր
«Օրհներգի» հեղինակությունը կորցնելուց
հետո, և այն բանից հետո, երբ Կարա-Մուր-
զայի ստեղծած ձոներգը նկատելի հետք
չթողեց գործնականում*, Կոմիտասը հորի-
նեց վերը հիշատակված երկրորդ «Օրհներ-
գը», նույնքան և բնականաբար մի բան էլ
ավելի ամբողջական ու գեղեցիկ, այն, որ
հիմա էլ կատարվում է, ոչ միայն երգչա-
խմբով, այլև նվագարանների խմբով:

Երկրորդ «Օրհներգի» մեղեդիական ոճը
հայ քաղաքային ժողովրդական երգերի ոճն
է: Ներդաշնակությունն անհամեմատ կանո-
նավոր է (անցած տարիների ընթացքում
Կոմիտասը հասցրել էր ինքնուրույն կերպով
լիովին ուսումնասիրել ներդաշնակագիտու-
թյան դպրոցական դասընթացը): Եթե առա-
ջին երգը հանդիսավոր հիմնի բնույթ ուներ,
երկրորդը գերազանցապես հանդարտ-քնա-
րական է և միայն վերջին նախադասությու-
նը՝ «բորբոքված»: Երգչախմբի կազմն այն-
պիսին է, ինչպիսին Կոմիտասն ունեցել է
նվարանում այդ տարիներին՝ ցածր դիս-
կանտներ ու ալտեր (փոքրահասակ ուշա-
կերտներ) և նեղ հնչյունաձավալով տե-
նորներ ու բասեր (մեծահասակ ուսանողնե-
րը): Այսպիսի կազմի համար խմբերգը զըր-
ված է հարմար տոնայնությունում՝ մի միևնո-
սու մաժոր: Ձայները դարձյալ, և այս ան-
գամ իրականությանը համապատասխան,
նշված են՝ Զիլ, Բարձր, Սոսկ, Բամբ (Կոմի-
տասը պատանի երգիչների համար ձայների
այլ, հատուկ նշում չի կիրառել): Բայց այս-

* Չենք կարող, սակայն, չվիճարկել քննադատի
ակերտքային սխալը՝ այն հիմնադրական հեռանա-
կությունը, որ երաժշտություն հորինելու համար նա
հատկացնում է «կանոնների» իմացությանը: «Բոլոր
կանոններին տիրապետելուց» առաջ պետք է ստեղ-
ծագործական բնատուր ձիրք ունենալ, ինչպիսին էր
հանգամանքը Կոմիտասի դեպքում:

** Նկատի ունենք մեծադիր թևերի վրա վառա-
հող տպագրված «Երգ ի ճորհաբեր գալուստ Աստ-
ուածլնտիր Տեառն Տեառն Մկրտիչ կաթողիկոս
Ամենայն Հայոց» վերնագրվածը, «հեղինակություն
Մկրտիչ Պապիան, երաժշտություն խաչատուր Կարա-
Մուրզա» (1893 թ.):

տեղ էլ մի ուրիշ պայմանականություն կա. ըստ երևույթին հայկական ձայնահիշերով տպագրելու դժվարություններից խուսափելով, բոլոր ձայները (և ոչ թե միայն սենդորը, ինչպես եվրոպական նոտագրության դեպքում արվում է) փաստական հնչումից մեկ օկտավ բարձր են գրված («Տարագի» ընճաղատ-թղթակիցը այս անգամ էլ կարող էր գրել, թե հելլինակը բասերից ստիպում է երգել սոպրանոյի ձայներ ?!):

Ստորև Կոմիտասի երկրորդ «Ազգային օրհներգը» իր սկզբնական բնագիր փնականում, հայկական ձայնահիշերից եվրոպական նոտագրության փոխադրած:

Այս երկրորդ «Օրհներգը» ժամանակին լայնորեն տարածվել է Անդրկովկասի, Ռուսաստանի և արտասահմանի հայաբնակ կենտրոններում: Խմբերգը մեծահասակների ընտանիքային խառը խմբի հարմարեցնելու նպատակով խմբավարները ըստ կամս իր փոփոխել են տոնայնությունը, երգաբաժինները վերաբաշխել: Ներկայումս, ի դեմս Լճիսեմում կատարվող տարբերակի, գրությունը է քառաձայն խառը խմբի համար այս երգի ամենահարմար տոնայնությունը՝ սոլ միներ—սի-բեմոլ մաժոր (կատարվող տարբերակում թերևս մամուզիչ չեն երգի մատրական դիրքի փոփոխումը, որ բխում է այն սխալ ըմբռնումից, թե քառի շեշտը ե-

ղանակի մետրական շեշտին անպայման պետք է համընկնի, և, դրա հետ կապված, մելեդիի 1-ին և 2-րդ կեսերն ավարտող տակտերում բնագրի ուղիղ փոփոխումները, որոնք, սակայն, գործնականում էական նշանակություն չեն ստանում):

Գրված լինելով դարձյալ նախքան Կոմիտասի երկրորդ կրթությունը ստանալը, այս երկրորդ «Օրհներգը» իր հերթին հաստատում է երիտասարդ Կոմիտասի ստեղծագործական ցայտուն օժտվածությունը:

• •

Կոմիտասից մեզ հասած ձեռագիր երաժշտական ստեղծագործությունները ղխավորապես սևագրություններ են և, որպես կանոն, անթվակիր են: Այս առումով, հաստատ թվական կրող երկու «Ազգային օրհներգ»-երը մեծ երաժշտագետի գործունեության հատկապես սկզբնական շրջանների ուսումնասիրության համար հիրավի մեծ նշանակություն են ձեռք բերում: Այսուհետ մեզ համար կարևոր էր հաստատել և այն, որ Կոմիտասյան երաժշտության նորարարությունը, հեղինակի ստեղծագործական տաղանդի մի օրգանական երևույթ լինելով, դեռևս վաղագույն շրջանում արդեն երևան եկել ու սկսել էր զարգանալ:

ԸԶԳԱՅԻՆ ՈՐՆԵՐԳ

(1895 թ.)

Խոսք: ԱՐԵԱԿ ԹԱՇՃՅԱՆԻ

Վեհ. ջերմորեն

երաժշտ. ԿՈՍԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ

Sopr. *p*

Ա - մե՞ն հա - յի սըր - տից բը - խած լը - սի՛ր այս ծայճն. ո՛վ Աս - տուած, եր - կար

Alti *p*

Ten. *p*

Bassi *p*

Ա - մե՞ն հա - յի սըր - տից բը - խած լը - սի՛ր այս ծայճն. ո՛վ Աս - տուած, եր - կար

f *dim.* հանդարտ

կեանք տո՛ւր Հայ - րս - պե - տի՛ն, եր - կար օ - լեր հա - յոց հօր:

f *dim.*

կեանք տո՛ւր Հայ - րա - պե - տի՛ն, եր - կար օ - լեր հա - յոց հօր:


Բորբոքված

հետզհետե ուժգին

1. 2.

Տէ՛ր, ամ - սա - սամ պա - հի՛ր դու միշտ Թո իսկ հիմ - նած մայր Ա - բող: Ա - բող:

Տէ՛ր, ամ - սա - սամ պա - հի՛ր դու միշտ Թո իսկ հիմ - նած մայր Ա - բող: Ա - բող:



ԷԿՈՒՄԵՆԻԿ

ԿՅԱՆՔ

ԼՈՒՐԵՐ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՅ ԵՎԵՂԵՑՈՒ ԹԵՄԵՐՈՒՑ

ՄԱՀԱՐԱՐԻ ՈՒՂԱՓԱՌ ԵՎԵՂԵՑՈՒ
ՀԱՍՏԱՏՄԱՆ 1900-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ
ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Պատասխանելով Մալաբարի ուղղափառ եկեղեցու կաթողիկոս Նորին Արքեպիսկոպոս Մորան Մար Բասիլիոս Օգեն Ա-ի եղբայրական սիրալիր հրավերին՝ Ամենայն Հայոց Հայրապետ Վազգեն Առաջինը զբաղակել էր հայ եկեղեցու բարձրաստիճան հոգևորականներից բաղկացած մի պատվիրակություն, Հայաստանյայց եկեղեցու և իր անուրից մասնակցելու համար 1872 թվականի դեկտեմբերի 31-ին Քոթայածում տեղի ունեցալիք հանդիսություններից՝ Եվրոպա՝ ս. Թովմաս առաքյալի մարտիրոսության և Մալաբարի ուղղափառ եկեղեցու հաստատման 1800-ամյակին:

Պատվիրակությունը գլխավորում էր Երուսաղեմի հայոց պատրիարք տ. Եղիշե արքեպիսկոպոս Տերտերյանը, որին ընկերակցում էին Երուսաղեմի Արքեպիսկոպոսի վանքի լուսարարապետ տ. Հայրիկ արքեպիսկոպոս Ալաւնյանը, տ. Վահան եպիսկոպոս Տերյանը և ուսուցիչներից հոգևոր հովիվ տ. Վազգեն վարդապետ Թաթոյանը:

Դեկտեմբերի 28-ին Պոմպեյի օդանավակայանում Երուսաղեմի սրբազան պատրիարքին դիմավորում են Մալաբարից ժամանած պատգամավորներ, ինչպես նաև Վա-

հան եպիսկոպոս Տերյանը, Վազգեն վրդ. Թաթոյանը և մի խումբ հնդկահայեր:

Հետևյալ օրը հայ եկեղեցու պատվիրակությունը ուղևորվում է Քոչին, ուր Մալաբարի ուղղափառ եկեղեցու ծերունազարդ հայրապետը հատկապես ուղարկել էր իր փոխանորդ Գորբնաիր կաթողիկոսին, որը ի գլուխ հոգևորականներից և աշխարհականներից բաղկացած մի ստվար պատգամավորություն, ողջունում և բարի գալուստ է մաղթում հայ եկեղեցու բարձրաստիճան հոգևորացուցիչներին:

Նույն օրը հայ եկեղեցու պատվիրակությունը Մալաբարի կաթողիկոսի անձնական ավտոմեքենայով մեկնում է Քոթայած, ուր զանգերի դողանքների և եկեղեցական մեղեդիների հնչյունների տակ հանդիսավոր թափոթով առաջնորդվում է նախ տաճար և ապա՝ Վեհարան: Վեհարանում ալեգարի հայրապետը, եպիսկոպոսներով շրջապատված, բարիգալստյան ջերմ խոսքերով ողջունում է հայ եկեղեցու պատվիրակությանը և միաժամանակ իր խորագրաց երախտագիտությունը հայտնում Ամենայն Հայոց Հայրապետի կողմից Մալաբար եկեղեցուն և իրեն եղած այդ մեծ պատվի համար:

